«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«23» մարտի 2022թ. թիվ 18 որոշմամբ

# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ........ 3

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ........ 5

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ........ 8

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ........ 8

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ........ 9

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ........12

ԲԱԺԻՆ 7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ) ........15

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ ........15

ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ........16

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ........20

ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)........24

ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) ........24

ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ........ …25

Հավելված №1 Ապահովագրության հատուկ պայմաններ («Վերապահումներ»)

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Շինարարական և մասնագիտացված տեխնիկայի կամավոր ապահովագրության սույն կանոնները, (**այսուհետև՝ Կանոններ**), մշակված են Հայաստանի Հանրապետության Օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2 Շինարարական և մասնագիտացված տեխնիկայի կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրության» դասերի մեջ:

1.3 Կանոնները հանդիսանում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» կամավոր Ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետև՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4 Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում օրենսդրությանը և Կանոններին:

Կանոններում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Կանոնները հրապարակային փաստաթուղթ է և տեղադրված է «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի պաշտոնական՝ www.armeniainsurance.am վեբ կայքում:

1.5 Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն,Ապահովադիրների հետ կնքում է շինարարական և մասնագիտացված տեխնիկայի (ՀՏ) և/կամ ՀՏ լրացուցիչ սարքավորման Պայմանագրեր, համաձայն որոնց Ապահովադիրը պարտավորվում է Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի դիմաց Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում իրականացնել ապահովագրական հատուցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի (հատուցման սահմանաչափի) սահմաններում:

1.6 Կանոնների համաձայն ապահովագրության սուբյեկտներ են հանդիսանում Ապահովագրողը, Ապահովադիրը, Շահառուն

1.7 Ապահովադիր կարող է հանդիսանալ շինարարական և մասնագիտացված տեխնիկայի սեփականատեր հանդիսացող, կամ իրավական այլ հիմքով շինարարական և մասնագիտացված տեխնիկայի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձը,

1.8 Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ հօգուտ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետև՝ Շահառու), որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով ապահովագրված շինարարական և մասնագիտացված տեխնիկայի նկատմամբ ունի գույքային կամ անձնական շահ և համապատասխանաբար հանդիսանում է շահագրգիռ անձ այդ շինարարական և մասնագիտացված տեխնիկայի անվտանգության ապահովման, անվնաս պահպանման խնդրում:

Գրավադրված շինարարական և մասնագիտացված տեխնիկայի ապահովագրության դեպքում Ապահովագրության պայմանագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի

սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադրին կամ այլ Շահառուին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.9 Ապահովադիրը կարող է փոխարինել Ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին՝ միայն վերջինիս գրավոր համաձայնությամբ՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին: Ընդ որում, Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա Ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել Ապահովագրական հատուցում ստանալու համար: Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո Շահառուի մահվան դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Շահառուի ժառանգներին՝ վերջիններիս կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունելուց հետո:

1.10 Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.11 Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

1.10.1 *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ,

1.10.2 *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքող անձ,

1.10.3 *Շահառու*՝ Ապահովագրության պայմանագրում նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը համաձայն ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի կամ պայմանագրերի ունի ավտոտրանսպորտի պահպանման գույքային շահ և ունի ապահովագրական հատուցում ստանալու առաջնային իրավունք:

1.10.4 *Ապահովագրական արժեք*՝ Շինարարական և մասնագիտացված տեխնիկայի Ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը,

1.10.5 *Ապահովագրական գումար*՝ Ապահովագրության պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ, սակայն այն չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրված օբյեկտի իրական (շուկայական) արժեքը և Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում նվազեցվում է յուրաքանչյուր հատուցման գումարի չափով:

1.10.6 *Ապահովագրավճար*՝ Ապահովագրավճարն Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է,

1.10.7 *Ապահովագրավճարի հերթական մասի վճարում* Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում մասերով, որոնց չափերը և վճարման ժամկետները սահմանվում են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրում:

1.10.8 *Ապահովագրական սակագին*՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

1.10.9 *Չհատուցվող գումար (ֆրանշիզա)*՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը,

1.10.10 *Ապահովագրական հատուցում*՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգման միջոցով:

1.10.11 Հատուցման սահմանաչափ՝ Պայմանագրով որևէ ապահովագրական ռիսկի կամ ապահովագրության օբյեկտի համար նախատեսված ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ագրեգատային՝ ապահովագրության ողջ ժամանակահատվածի համար:

1.10.12 Լիզինգառու - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պարտավոր է ժամանակավոր տիրապետման և օգտագործման ընդունել լիզինգի առարկան որոշակի վարձավճարով, որոշակի ժամկետով և լիզինգի պայմանագրով որոշված պայմաններով՝ ձեռնարկատիրական նպատակներով կամ այլ օգտակար արդյունքի ստացման համար:

1.10.13 *Վարձակալ* - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գույքի սեփականատիրոջ (կամ նրա կողմից լիազորված անձի) հետ կնքել է վարձակալության (գույքային վարձակալության) պայմանագիր և ստացել է այդպիսի գույքը ժամանակավոր տիրապետման և (կամ) օգտագործման համար:

1.10.14 *Ապահովագրված շինարարական և մասնագիտացված տեխնիկա* (այսուհետ՝ ապահովագրված հատուկ տեխնիկա կամ ապահովագրված ՀՏ)՝ Պայմանագրում նշված (նույնականացված) ՀՏ:

1.10.15 *Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) աշխատակիցներ կամ աշխատողներ*՝ ֆիզիկական անձինք, որոնք Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) հետ գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, եթե նրանք գործում կամ պետք է գործեին Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) առաջադրանքով և տեխնիկական կանոնակարգերի, ինչպես նաև գործող այլ նորմատիվ և հրահանգչական փաստաթղթերի պահպանման նկատմամբ նրա հսկողության ներքո:

1.10.16 *Երրորդ անձինք*՝ բոլոր անձինք, բացառությամբ.

1) Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի),

2) Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) աշխատակիցների,

3) Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) ընտանիքի անդամների, եթե Ապահովադիրը (Շահառուն, Լիզինգառուն, Վարձակալը) հանդիսանում է անհատ ձեռնարկատեր կամ գործունակ ֆիզիկական անձ,

4) անձանց, որոնք աշխատում են Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով և իրականացնում են ինչ–որ աշխատանք ապահովագրության տարածքում Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) իմացությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

5) ապահովագրված գույքի սեփականատերը, տիրապետողը, օգտագործողը:

## ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել ապահովագրված շինարարական և մասնագիտացված տեխնիկայի համար Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում:

2.2 Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտարարությունը կամ Ապահովագրողի պահանջով գրավոր դիմումը, եթե անհրաժեշտ է որպեսզի Ապահովադրի կողմից ներկայացվող դիմումի մեջ ներառվեն լրացուցիչ տեղեկություններ, որոնք չեն

ներառվելու Պայմանագրում և (կամ) այդ տեղեկություններն անհրաժեշտ են Ապահովագրողին Ապահովագրության ընդունվող ռիսկի գնահատման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

2.3 Պայմանագրի կնքման համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել՝

- ապահովագրության ընդունվող գույքի նկատմամբ Ապահովադրի (Շահառուի) գույքային շահը հավաստող փաստաթղթերը (դրանց պատճենները): Այդպիսի փաստաթղթեր կարող են լինել՝ սեփականության իրավունքի վկայականը, Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքի փոխանցումը հաստատող կամ Ապահովադրին (Շահառուին) տիրապետելու/օգտագործելու իրավունք օժտող պայմանագրերը կամ ժառանգության իրավունքի վկայականը,

- ապահովագրության համար ներկայացված գույքի իրական արժեքը հաստատող փաստաթղթեր,

- տվյալ գույքի առկայությունն հաստատող փաստաթղթերը (այդ թվում գույքի լուսանկարները),

- տվյալ գույքի փոխադրման երթուղու և պայմանների մասին տեղեկատվություն պարունակող, փոխադրման ընթացքում անվտանգության ապահովման միջոցների վերաբերյալ փաստաթղթեր,

- գույքի պահպանման, շահագործման, պահպանման և շահագործման ժամանակ անվտանգության միջոցների ապահովման մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթեր,

- գույքի որոշակի կատեգորիաների համար իրավասու մարմինների կողմից սահմանված հատուկ պահանջներ պարունակող փաստաթղթեր (նման պահանջների առկայության դեպքում),

3) Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին հնարավորություն է տալիս զննել ապահովագրության ընդունվող գույքը,

Ապահովագրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը անցկացնում է ապահովագրության ընդունվող գույքի զննություն՝ ստուգելով դրա վիճակը (առկայությունը, ամբողջականությունը, սարքինությունը, շահագործման և պահպանման պայմանները, մաշվածության աստիճանը), գույքի հայտարարաված և իրական արժեքի համապատասխանությունը, ինչպես նաև կարող է նշանակել փորձաքննություն՝ գույքի իրական արժեքը որոշելու նպատակով:

Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ կրճատել կամ ընդլայնել ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

2.4 Ապահովագրության պայմանագիրն Ապահովագրության իրականացման փաստը հավաստող փաստաթուղթ է, որը տրամադրվում է Ապահովադրին՝ սահմանված ապահովագրավճարի մուծումից անմիջապես հետո, եթե ապահովագրավճարի վճարման այլ ժամկետ սահմանված չէ: Եթե Պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման եղանակը (մեկից ավելի փուլերով վճարում), ապա Պայմանագիրը ստորագրությամբ հանձնվում է Ապահովադրին ապահովագրավճարի առաջին մասը վճարելու պահից: Եթե Պայմանագրով սահմանված է ժամկետ, որի ընթացքում, տարաժամկետ վճարման եղանակի առկայությամբ, պետք է կատարվի առաջին վճարումը, ապա Պայմանագիրը ստորագրությամբ հանձնվում է Ապահովադրին այն կնքելուց անմիջապես հետո:

## ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1 Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի (Շահառուի) այն գույքային շահերը, որոնք կապված են ապահովագրված գույքի վնասվելու, ոչնչացման կամ կորստի հետ:

3.2 Կանոնների համաձայն կարող է ապահովագրվել շահագործման ընդունված և շահագործման ցանկացած փուլում գտնվող գույքը, որը նշված է Պայմանագրում և դասվում է նշված գույքային խմբերից որևէ մեկին (այսուհետ՝ «մասնագիտացված տեխնիկա»)՝

3.2.1. Շինարարական տեխնիկա,

3.2.2. Գյուղատնտեսական տեխնիկա,
3.2.3. Հողաբարելավման տեխնիկա,
3.2.4. Անտառտնտեսության տեխնիկա,
3.2.5. Լեռնային տեխնիկա,
3.2.6. Պահեստային տեխնիկա,
3.2.7. Օդանավակայանային տեխնիկա:

3.3 Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ (այսուհետ՝ «Կողմեր») կարող է ապահովագրվել մասնագիտացված տեխնիկայի լրացուցիչ սարքավորումները:

Կանոնների համաձայն լրացուցիչ սարքավորում է համարվում մասնագիտացված տեխնիկայի գործարանային հավաքակազմի մեջ չմտնող սարքավորումը, ինչպես դրան միացված, այնպես էլ չմիացված, որի տեխնիկական բնութագրերը և նշանակությունը, ինչպես նաև առավել մասնագիտացված տեխնիկայի տեխնիկական բնութագրերը, թույլ են տալիս համատեղ շահագործումը որոշակի տեսակի աշխատանքների կատարման ժամանակ:

Ապահովագրության ընդունվում են համապատասխան ստանդարտների, շահագործման հրահանգների, արտադրող ձեռնարկությունների հրահանգների և այլ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող լրացուցիչ սարքավորումները:

Լրացուցիչ սարքավորումը համարվում է ապահովագրված միայն այն դեպքում, եթե այն նշված է Պայմանագրում ՝ ապահովագրական գումարների նշումով:

3.4 Կողմերի համաձայնությամբ կարող է ապահովագրվել շինհրապարակի սարքավորումները:

Շինհրապարակի սարքավորմանը դասվում է շինհրապարակում գտնվող գույքը, այդ թվում՝ ժամանակավոր գույքագրման շենքեր և շինություններ, շինարարական վագոններ:

Շինհրապարակի սարքավորումը համարվում է ապահովագրված միայն այն դեպքում, եթե այն նշված է Պայմանագրում ՝ ապահովազական գումարների նշումով:

3.5 Կողմերի համաձայնությամբ, Պայմանագրում Վերապահում ներառելու միջոցով և առանձին ապահովագրական գումարներ սահմանելով կարող է ապահովագրվել մասնագիտացված տեխնիկան, որն աշխատում է առանձնապես բարդ շահագործման պայմաններում, մասնավորապես.

3.5.1. Ստորգետնյա աշխատանքների համար օգտագործվող մեքենաներ և սարքավորումներ (Վերապահում 400՝ հավելված 1 ),

3.5.2. Նավթի, գազի և երկրաջերմային հորատման սարքավորումներ (Վերապահում 420՝ հավելված 1),

3.5.3. Ջրի հորատման սարքավորումներ (Վերապահում 421՝ հավելված 1),

3.5.4. Բեռնանավերի և պոնտոնների վրա աշխատող սարքավորումներ (Վերապահում 499՝ հավելված 1),

3.5.5. Մասնագիտացված տեխնիկան ավտոմեքենայի հենասարքի վրա՝ ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու ժամանակ:

3.6 Կանոններով ապահովագրության չեն ընդունվում՝
3.6.1. Մարդատար տրանսպորտային միջոցները,
3.6.2. Տրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվում են ուղևորների կամ բեռների առևտրային փոխադրման համար,
3.6.3. Թռչող սարքերը,
3.6.4. Լողացող միջոցները և նավերը,
3.6.5. Մասնագիտացված տեխնիկան, որը արդիականացվել է առանց արտադրող գործարանի հետ համաձայնեցնելու,

3.6.6. Մասնագիտացված տեխնիկան, որը ներմուծվել է ՀՀ տարածք մաքսային նորմերի և կանոնների խախտմամբ կամ ՀՀ պետական մարմինների և Ինտերպոլի մարմինների տվյալների տեղեկատվական բազաներում հաշվառված է որպես նախկինում առևանգված,

3.6.7. Սահմանված կարգով չգրանցված և համապատասխան փաստաթղթեր չունեցող մասնագիտացված տեխնիկան, եթե նման գրանցումը և համապատասխան փաստաթղթերի առկայությունը պարտադիր կարգով պահանջվում է ՀՀ գործող օրենսդրության համաձայն,

3.6.8. Մասնագիտացված տեխնիկան, որն ունի վնասվածքներ կամ անսարքություններ, որոնց առկայության դեպքում դրա շահագործումն արգելվում է տեղական, գերատեսչական կամ այլ նորմատիվ ակտերով,

3.6.9. Վթարային վիճակում գտնվող մասնագիտացված տեխնիկան,

3.6.10. Արտադրության ընթացքում սպառվող հիմնական և օժանդակ նյութերը, ինչպիսիք են վառելանյութը, քիմիական նյութերը,

3.6.11. Բոլոր տեսակի գործիքները և սարքերը:

3.7 Պայմանագիրը գործում է միայն այն ապահովագրված գույքի նկատմամբ, որը գտնվում է ապահովագրության տարածքում և նշված է Պայմանագրում:

3.8 Ապահովագրության տարածք ասելով հասկացվում է՝

3.8.1 Շահագործման տարածք՝ աշխատանքների իրականացման տարածք՝ շինհրապարակի, ձեռնարկության կամ այլ հարթակի տարածք, որտեղ մասնագիտացված տեխնիկան օգտագործվում է աշխատանքների իրականացման համար՝ համաձայն ուղեցույցների, պատվեր-հրահանգի, աշխատանքների իրականացման նախագծերի,

3.8.2 Պահպանման տարածք՝ մասնագիտացված տեխնիկայի մշտական կամ ժամանակավոր պահպանման վայրեր,

3.8.3 Փոխադրման տարածք՝ տարածք, որտեղ մասնագիտացված տեխնիկան տեղաշարժվում է իր ընթացքով կամ փոխադրվում է դրա համար հատուկ նախատեսված տեխնիկայի միջոցով պահպանման տարածքից մինչև շահագործման տարածք և հետադարձ, կամ պահպանման մեկ տարածքից մինչև պահպանման այլ տարածք և հետադարձ, կամ շահագործման մեկ տարածքից մինչև մյուսը և հետադարձ: Համաձայն Պայմանագրի՝ փոխադրման տարածքը կարող է ներառել կամ չներառել ընդհանուր օգտագործման ճանապարհները:

## ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Կանոնների համաձայն կարող են ապահովագրվել Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման և վնասման հետ, հետյալ ռիսկերով ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետևանքով՝

4.1.1. «Հրդեհ, պայթյուն, կայծակի հարված»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասվածքից, որը հետևանք է.

1) ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող ապրանքների, տաք գազերի, հրդեհի ընթացքում բարձր ջերմաստիճանի ազդեցության,

2) ապահովագրված գույքի վրա հրդեհի կանխարգելման կամ մարման նպատակով կիրառվող հրդեհամարման միջոցների ազդեցության,

3) պայթյունի ազդեցության,

4) կայծակի էլեկտրական պարպման (կայծակի հարվածի),

4.1.1.1. Կանոններում կիրառվում են հետևյալ հասկացությունները.

**Հրդեհ**՝ կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած կամ այդ վայրերի

սահմաններից դուրս եկած անվերահսկելի այրումը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու:

**Պայթյուն**՝ կարճ ժամանակի ընթացքում սահմանափակ ծավալով մեծ քանակի էներգիայի անջատման արագ ընթացող գործընթացը՝ կապված նյութի վիճակի ֆիզիկաքիմիական ակնթարթային փոփոխության հետ, որը հանգեցնում է ճնշման տատանման կամ հարվածային ալիքի առաջացման և ուղեկցվում է սեղմված գազերի կամ գոլորշիների գոյացմամբ, որոնք ունակ են արտադրել աշխատանք,

Կայծակի հարված՝ ամպրոպից առաջացած էլեկտրական պարպումը, որի դեպքում էլեկտրական լիցքն անցնելով ապահովագրված գույքի միջով ապահովագրված գույքի վրա թողնում է ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն:

4.1.2. «Տարերային աղետներ»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասվածքից, որը հետևանք է.

1) հրաբխի ժայթքման,

2) ջրհեղեղի, հեղեղման, ստորերկրյա ջրերի հեղեղման,

3) փոթորիկի, հողմի, մրրիկի, պտտահողմի,

4) սողանքի, զրունտի նստվածքի, փլուզման, քարահոսքի, ձնահոսքի, ցեխահոսքի,

5) կարկուտի, մերկասառույցի:

4.1.2.1. Կանոններում կիրառվում են հետևյալ հասկացությունները.

Հրաբխի ժայթքում՝ հրաբխային գործընթաց, որն ուղեկցվում է հրաբխի խառնարանից շիկացած գազերի, քարերի, մոխրի արտանետմամբ, ինչպես նաև մագմայի արտահոսքով,

Ջրհեղեղ՝ տարածքի անկանխատեսելի հեղեղումը ջրով՝ ջրային զանգվածի ջրավազանի սովորական սահմաններից դուրս գալու հետևանքով, որն առաջանում է ձյան ինտենսիվ հալոցքի, մեծ քանակությամբ տեղումների, ջրի՝ քամու կողմից քշվելու, սառցե խցանումների, ջրամբարների և ամբարտակների ճեղքմամբ, լեռնային զանգվածների ջրի ակունքներ թափվելու, ինչը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին,

Հեղեղում՝ տարածքի հեղեղումը ջրով՝ ջրերի բարձրացման կամ վարարման ընթացքում,

Վարարում՝գետի ջրային ռեժիմի փուլը, որը կարող է բազմիցս կրկնվել տարվա տարբեր եղանակներին, որը բնութագրվում է ջրի ինտենսիվ, սովորաբար՝ մնացորդների և մակարդակների կարճաժամկետ մեծացմամբ, և առաջանում է անձրևներից կամ ջերմացման ժամանակ ձնհալի հետևանքով,

Ստորերկրյա ջրերի հեղեղում՝ գործընթացը, որի ընթացքում ջրային ռեժիմի և տարածքի հավասարակշռության հաշվարկային ժամանակահատվածում խախտման հետևանքով տեղի է ունենում ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացում, որոնք հասնում են կրիտիկական նշանակության և պահանջում են պաշտպանական միջոցառումների կիրառում;

Փոթորիկ՝ հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատև քամի: Քամու արագությունը փոթորիկի ժամանակ գերազանցում է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 կամ ավելի բարձր բալ),

Հողմ՝ երկարատև և ուժեղ քամի, որի արագությունը գերազանցում է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 կամ ավելի բարձր բալ),

Մրրիկ՝ երկարատև և ուժգին քամի, որի արագությունը գերազանցում է 35 մ/վ,

Պտտահողմ՝ մթնոլորտային մրրիկ, որն առաջանում է ամպրոպային ամպում և տարածվում է դեպի ներքև, կազմված է արագ պտտվող օդից, խոնավության մասնիկներից, ավազից, փոշուց և այլ մասնիկներից և որի պտտման արագությունը գերազանցում է 50 մ/վ,

Սողանք՝ լանջից ներքև հողի զանգվածի տեղաշարժ (սահք)՝ սեփական զանգվածի ազդեցությամբ,

Գրունտի նստվածք՝ բնական երևույթների արդյունքում գրունտի իջեցում բնական ճաքերի կամ դատարկ հողային տարածությունների մեջ, այդ թվում կարստային կամարների փլուզման, տորֆի մնացորդների այրման արդյունքում և այլն,

Փլուզում, քարահոսք՝ լեռնային ժայռերի հանկարծակի փլուզում՝ կայունության կորստի կամ թուլացման հետևանքով, լեռնային ժայռերից քարերի հոսք,

Ձնահոսք՝ ձյան զանգված, որն ընկնում կամ սահում է լեռնալանջերից ավելի քան 20 մ/վ արագությամբ:

Ցեխահոսք՝ ցեխային կամ ցեխաքարային հոսանքներ, որոնք հանկարծակի առաջանում են առատ տեղումների կամ ինտենսիվ ձնհալքի արդյունքում լեռնային գետերի ակունքներում հեղեղումների պատճառով:

Կարկուտ՝ մթնոլորտային տեղումների տարատեսակ, որն արտահայտվում է երկնքից թափվող տարբեր չափի սառցե գոյացությունների տեսքով,

Մերկասառույց՝ սառույցի խիտ շերտ, որն առաջանում է առարկաների վրա անձրևի կաթիլների կամ մառախուղի սառելու հետևանքով:

4.1.3. «Վթար»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է աշխատանքների արտադրության վայրերում կամ պահպանման վայրերում ընդհանուր օգտագործման ճանապարհներից դուրս ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասումից, որը հետևանք է.

1) մասնագիտացված տեխնիկայի կողաշրջման, անկման, 2) մասնագիտացված տեխնիկայի անվերահսկելի տեղաշարժի, սողալու, սահելու,

3) մասնագիտացված տեխնիկայի անշարժ կամ շարժվող առարկաների հետ բախման,

4) մասնագիտացված տեխնիկայի վրա տրանսպորտային միջոցների վրաերթի,

5) շենքերի կամ շինությունների փլուզման,

6) ծառերի, սառցե գոյացությունների, շինության կոնստրուկցիաների, այլ առարկաների անկման,

7) հողով կամ այլ նյութով արգելափակմամբ,

8) ստորգետնյա ջրերով հեղեղմամբ,

9) նավերի կուտակմամբ:

4.1.4. «Ինժեներական համակարգերի վթար»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքի վրա ջրի, գոլորշու կամ այլ հեղուկի ազդեցությամբ ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասումից, որը հետևանք է.

1) ջրատար, կոյուղու, ջեռուցման կամ հակահրդեհային համակարգերի վթարի (հանկարծակի խափանման), ինչպես նաև հակահրդեհային համակարգերի հանկարծակի և անհրաժեշտությամբ չպայմանավորված միանալու,

2) Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) տիրապետման, օգտագործման կամ տնօրինման տակ չգտնվող հարակից փակ տարածքներից ջրի, գոլորշու կամ այլ հեղուկի ներթափանցման:

4.1.5. «Թռչող սարքերի անկում»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է թռչող սարքերի, դրանց մասերի, բեկորների կամ դրանց բեռի անկման հետևանքով ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասումից,

4.1.6. «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ»

Սույն ռիսկով հատուցվում է վնասը, որն առաջացել է երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով ապահովագրված գույքի կորստից, ոչնչացումից կամ վնասումից, որոնք ՀՀ գործող վարչական կամ քրեական օրենսդրությամբ որակվում են որպես.

1) ապահովագրված գույքի դիտավորությամբ (կանխամտածված) ոչնչացում կամ վնասում,

2) ապահովագրված գույքի անզգուշությամբ ոչնչացում կամ վնասում,

3) խուլիգանություն,վանդալիզմ,

4) գողություն, կողոպուտ, ավազակություն:

4.1.6.1. Կանոնների համաձայն կիրառվում են երրորդ անձանց հակաօրինական գործողությունների ձևերի հետևյալ սահմանումները.

Գույքի դիտավորությամբ ոչնչացում կամ վնասում (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 185-րդ հոդվածով որակելու դեպքում),

Գույքի անզգուշությամբ ոչնչացում կամ վնասում՝ գույքի ոչնչացումը կամ վնասումը երրորդ անձի կողմից, որը կատարվել է կրակի կամ առավել մեծ վտանգի այլ աղբյուրների հետ անզգույշ վերաբերվելու միջոցով (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 186-րդ հոդվածով որակելու դեպքում),

Խուլիգանություն՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 258-րդ հոդվածով որակելու դեպքում),

Վանդալիզմ՝ ապահովագրված գույքը անպարկեշտ գրագրություններով կամ պատկերներով պղծելը, փչացնելը (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 260-րդ հոդվածով որակելու դեպքում),

Գողություն՝ ապահովագրված գույքի գաղտնի հափշտակությունը (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածով որակելու դեպքում),

Կողոպուտ՝ ապահովագրված գույքի բացահայտ հափշտակությունը (մեղավոր անձին (անձանց) ՀՀ ՔՕ 176-րդ հոդվածով որակելու դեպքում),

Ավազակություն՝ ապահովագրված գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (մեղավոր աձին (անձանց) ՀՀ ՔՕ 175-րդ հոդվածով որակելու դեպքում):

4.1.6.2. Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների ձևերի ցանկը, որոնք ծածկվում են սույն ռիսկով, կարող է կրճատվել Պայմանագրով:

4.1.7. «Ճանապարհատրանսպորտային պատահար»

Սույն ռիսկով հատուցվում է ապահովագրված մասնագիտացված տեխնիկայի ընդհանուր օգտագործման ճանապարհներով ինքնուրույն տեղաշարժի ժամանակ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասվածքի հետևանքով առաջացած վնասը:

Սույն ռիսկով փոխհատուցվում է վնասը, պայմանով, որ ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել՝

1) ապահովագրված գույքի կայանման վայրից մինչև շահագործման վայր և հետադարձ կամ շահագործման (կայանման) մեկ վայրից մինչև այլ վայր երթևեկելու ժամանակ՝ ապահովագրված գույքի տեղափոխման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ուղեցույցում կամ այլ փաստաթղթում նշված տեխնիկական առաջադրանքին կամ երթուղուն համապատասխան, 2) ապահովագրված գույքի օգտագործմամբ ընդհանուր օգտագործման ճանապարհներին աշխատանքներ իրականացնելիս:

4.1.7.1. Կանոնների համաձայն ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ) ասելով հասկացվում է իրադարձությունը, որն առաջացել է ապահովագրված մասնագիտացված տեխնիկայի երթևեկության ընթացքում ճանապարհին և դրա մասնակցությամբ, այդ թվում՝ վրաերթը, կողաշրջումը, բախումն այն իմաստով, որով տվյալ հասկացությունն օգտագործվում է ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոններով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.1.7.2. Կանոնների նպատակով ճանապարհ ասելով հասկացվում է առնվազն մեկ երթևեկելի մաս ունեցող, իսկ առկայության դեպքում նաև տրամվայի գծեր, մայթեր, կողնակներ և բաժանարար գոտիներ ներառող և օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցների երթևեկության համար օգտագործվող կահավորված կամ հարմարեցված հողային գոտին կամ արհեստական կառույցի մակերեսը:

4.2. Կանոններով Ապահովադրի գույքը կարող է ապահովագրվել ինչպես Կանոնների 4.1.1. - 4.1.7 կետերում թվարկված բոլոր հնարավոր ապահովագրական ռիսկերից, այնպես էլ մեկ ռիսկից կամ այդ ռիսկերի համադրությամբ:

4.3. Մի քանի իրադարձություններ տեղի ունենալու դեպքում, որոնց ի հայտ գալու հետ կապված իրականացվում է ապահովագրությունը, դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար, եթե այդ իրադարձությունները ունեն տեղի ունենալու միևնույն սկզբնապատճառը:

4.4. Եթե Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ (հատուկ նշված չէ), ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.

4.4.1. Վնասը, որը պատճառվել է երկրաշարժի հետևանքով: Պայմանագրով «Երկրաշարժ» ռիսկը որպես ապահովագրական ռիսկ նախատեսված (հատուկ նշված) լինելու դեպքում, այն ունի հետևյալ նշանակությունը.

Երկրաշարժ՝ երկրի ընդերքում տեղի ունեցող բնական գործընթացների հետևանք, որն ուղեկցվում է ստորգետնյա ցնցումներով և երկրակեղևի տատանումներով:

4.4.2. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ազդեցության հետևանքով,

4.4.3. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ ռազմական այլ միջոցառումների, զինված խմբավորումների գործողությունների, քաղաքացիական պատերազմի հետևանքով,

4.4.4. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների և գործադուլների հետևանքով (եթե Պայմանագրով նախատեսված չէ 001 Վերապահման կիրառումը),

4.4.5. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների գործողությունների հետևանքով,

4.4.6. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ահաբեկչության, դիվերսիայի հետևանքով (եթե Պայմանագրով նախատեսված չէ Ահաբեկչություն 014 Վերապահման կիրառումը),

4.4.7. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը դրա տեղափոխման, բեռնման, բեռնաթափման ընթացքում (եթե Պայմանագրով նախատեսված չէ 401 Վերապահման կիրառումը),

4.4.8. շինհրապարակից դուրս պահպանվող կամ աշխատանքների ավարտից կամ աշխատանքների իրականացման ցանկացած ընդմիջման ժամանակ ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը՝ տարածքի հեղեղման կամ ջրածածկման հետևանքով (եթե Պայմանագրով նախատեսված չէ 013, 108 Վերապահման կիրառումը),

4.4.9. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը փորձարարական կամ հետազոտական աշխատանքներ իրականացնելու ժամանակ կամ հետևանքով,

4.4.10. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը մոնտաժման, ապամոնտաժման աշխատանքներ իրականացնելու ժամանակ կամ հետևանքով,

4.4.11. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը, երբ այն օգտագործվում է նավթային, գազային և երկրաջերմային հորերի հորատման կամ գոյություն ունեցող նավթային, գազային և երկրաջերմային հորերում աշխատելու համար (եթե Պայմանագրով նախատեսված չէ 420 Վերապահման կիրառումը),

4.4.12. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը «ջրի» վրա հորատման աշխատանքների համար օգտագործելու դեպքում (եթե Պայմանագրով նախատեսված չէ 421 Վերապահման կիրառումը),

4.4.13. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը որը տեղադրված է և աշխատում է հարթակների վրա ջրային մակերեսների եզրերի մոտ, բեռնանավերի և պոնտոնների վրա (եթե Պայմանագրով նախատեսված չէ 499 Վերապահման կիրառումը),

4.4.14. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը սառցահատմամբ դրա շարժի կամ փոխադրման ժամանակ, 4.4.15. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը դրա հողի տակ շահագործման դեպքում (եթե Պայմանագրով նախատեսված չէ 400 Վերապահման կիրառումը),

4.4.16. փոխարինվող կախովի սարքավորումների կորուստը, ոչնչացումը կամ վնասումը (հորատիչներ, կտիչներ, շերեփներ, լցակույտեր, հիդրոմուրճեր և այլն)։ Այս բացառությունը չի տարածվում ապահովագրված գույքի վրա տեղադրված փոխարինվող կախովի սարքավորումների կորստին, ոչնչացմանը կամ վնասմանը,

4.4.17. վնասվածքը, որը չի հանգեցրել ապահովագրված գույքի հետագա վնասի պատճառման, կամ կապված չէ ապահովագրական պատահարի հետևանքով.ապահովագրված գույքի այլ վնասվածքների հետ`

1) ապահովագրված գույքի անվադողերի, անվասկավառակների, թրթուռային շավիղի,

2) ապահովագրված գույքի արտանետվող համակարգի տարրերի,

3) ապահովագրված գույքի պաշտպանիչ վահանների (շարժիչի կառտեր, փոխանցման տուփ, վառելիքի բաք և այլն),

4) ապահովագրված գույքի թափքի հակակոռոզիոն ծածկույթը,

4.4.18. ապահովագրված գույքի մարտկոցի, գեներատորի կամ էլեկտրական սարքավորումների այլ մասերի վնասվածքը` դրանցում առաջացած կարճ միացման հետևանքով, որը չի հանգեցրել ապահովագրված գույքին հետագա վնաս պատճառելուն,

4.4.19. ապահովագրված գույքի շարժիչի վնասվածքները` շարժիչի ընդունման համակարգում հեղուկների կամ այլ կողմնակի նյութերի ներթափանցման հետևանքով («հիդրոհարված»),

4.4.20. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը այն անձանց կողմից շահագործման հետևանքով, ովքեր ապահովագրված գույքի ստացել են Ապահովադրից (Շահառուից) վարձակալության, լիզինգի, վարձույթի և նշված չեն Պայմանագրում,

4.4.21. ապահովագրված գույքի ապրանքային արժեքի կորուստը։

4.5. Բոլոր դեպքերում ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.

4.5.1. Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի), ինչպես նաև այն անձանց ովքեր գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) հետ, կանխամտածված գործողությունների կամ կոպիտ անփութության հետևանքով ի հայտ եկած վնասը,

4.5.2. Ապահովադրին (Շահառուին) պատճառված անուղղակի վնասները, ներառյալ բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, եկամտի կորուստը կամ չստանալը, տուգանքները, տույժերը, վնասները և ծախսերը, որոնց հատուցումը նախատեսված չէ Կանոններով և Պայմանագրով,

4.5.3. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը Պայմանագրի գործողության ժամկետից դուրս, ինչպես նաև Պայմանագրով սահմանված «ապահովագրության տարածքի» սահմաններից դուրս,

4.5.4. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի գործողության ժամկետի ավարտից հետո, ապահովագրված գույքի շահագործման ընթացքում,

4.5.5. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքի արատների և թերությունների հետևանքով, որոնք հայտնի են եղել Ապահովադրին (Շահառուին) մինչև Պայմանագրի կնքումը, բայց որոնց մասին չի հայտնվել Ապահովագրողին,

4.5.6. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը տվյալ տեղանքի համար միջին ցուցանիշները չգերազանցող կլիմայական և եղանակային պայմանների ազդեցության հետևանքով (անձրևի, ձյան կամ այլ տեղումների, ջերմաստիճանի, խոնավության կամ այլ բնական գործոնների փոփոխությունների):

4.5.7. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ոչ սթափ վիճակում գտնվող, ալկոհոլի կամ թմրամիջոցների, հոգեմետ, տոքսիկ, դեղորայքային պատրաստուկների ազդեցության տակ գտնվող անձանց կողմից, որոնց օգտագործումը հակացուցված է ապահովագրված գույքի շահագործման հետ կապված գործողությունների իրականացման ընթացքում, ինչպես նաև, եթե ապահովագրված գույքի կառավարող (վարող) անձը դեպքի վայրից հեռացել է կամ հրաժարվել է անցնել բժշկական հետազոտություն (փորձաքննություն),

4.5.8. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը շահագործող անձի կողմից հրդեհային անվտանգության մասին օրենսդրությունը կամ հրդեհավտանգ, պայթյունավտանգ նյութերի փոխադրման և պահպանման կանոնները խախտելու հետևանքով,

4.5.9. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը շահագործող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված ուղևորների և բեռների փոխադրման սահմանված կանոնների (այսուհետ՝ ՃԵԿ) կամ մասնագիտացված տեխնիկայի շահագործման կանոնների խախտման հետևանքով,

4.5.10. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը շահագործող անձի կողմից համապատասխան մասնագիտացված տեխնիկայի շահագործման հրահանգով, գործող օրենսդրությամբ, Ապահովադրի ներքին փաստաթղթերով նախատեսված անվտանգության տեխնիկայի խախտման հետևանքով,

4.5.11. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը շահագործող անձի կողմից ապահովագրված գույքը սարքին և շահագործման համար պիտանի վիճակում պահելու նորմատիվ փաստաթղթերի պահանջները չպահպանելու հետևանքով,

4.5.12. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) իմացությամբ այն անձի կողմից օգտագործելու ժամանակ, ով դրա համար չունի օրինական հիմքեր, և (կամ) Պայմանագրում նշված չէ շարժման ժամանակ ապահովագրված գույքը վարելու թույլտվություն ունեցող անձ և (կամ) ապահովագրված գույքի օգտագործմամբ աշխատանքներ կատարելու համար թույլատրված անձ,

4.5.13. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ակնհայտ անսարք ապահովագրված գույքը Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) կամ վարելու թույլտվություն ունեցող անձի կողմից վարելու ժամանակ, որի շահագործումն արգելված է ՀՀ նորմատիվ ակտերին (այդ թվում՝ ճանապարհային երթևեկության կանոններին, մասնագիտացված տեխնիկայի շահագործման կանոններին) համապատասխան, ինչպես նաև վնասվելուց հետո վնասված վիճակում ապահովագրված գույքի շահագործման դեպքում, բայց մինչև վերանորոգման անցկացումը, որից հետո երաշխավորվում է բնականոն շահագործումը,

4.5.14. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը այն անձի կողմից շահագործելու հետևանքով, ով չունի համապատասխան վարելու իրավունքներ (համապատասխան կարգի վարորդական վկայական, համապատասխան կարգի տրակտորիստ-մեքենավարի վկայական) և (կամ) սահմանված նմուշի վկայականով հաստատված համապատասխան մասնագիտացված տեխնիկայի շահագործման որակավորման կարգ,

4.5.15. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը՝ ապահովագրված գույքի շարժիչի կամ այլ հանգույցների և ագրեգատների տաքացման համար բաց կրակի աղբյուրների օգտագործման հետևանքով,

4.5.16. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքը բեռնման, բեռնաթափման, փոխադրման, բեռներով այլ գործողությունների իրականացման նպատակով

շահագործելու հետևանքով, որոնց քաշը գերազանցում է ապահովագրված գույքը արտադրող գործարանի կողմից թույլատրված առավելագույն չափը,

4.5.17. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը Ապահովադրի (Շահառուի, Լիզինգառուի, Վարձակալի) աշխատողների գործունեության արդյունքում, որոնք կապված չեն իրենց աշխատանքային (ծառայողական, պաշտոնական) պարտականությունների կատարման կամ առանց հատուկ թույլտվության ապահովագրված գույքի օգտագործման հետ, երբ նման թույլտվությունը պարտադիր է,

4.5.18. ապահովագրված գույքի հաշվառման համարանիշների, ապակու խոզանակների, լուսարձակների մաքրիչի, ավտոմագնիտոլայի, առջևի շարժական ավտոմագնիտոլայի վահանակների, անիվների, անիվների սկավառակների, ցեխահավաքների, բանալիների, հակաառևանգման համակարգի և դրա հեռակառավարման վահանակի, կողային հայելիների գողությունը, եթե նման գողությունը տեղի է ունեցել առանց մասնագիտացված տեխնիկայի գողության,

4.5.19. ապահովագրված գույքի կորուստը՝ դրա հափշտակության հետևանքով, բացառությամբ գողության, կողոպուտի, ավազակության հետևանքով ապահովագրված գույքի հափշտակության դեպքերի,

4.5.20. ապահովագրված գույքի կորուստը անհետացման արդյունքում, որի պատճառները չեն հաստատվել իրավասու մարմիններից ստացված փաստաթղթերով,

4.5.21. գույքագրում կատարելիս հայտնաբերված ապահովագրված գույքի պակասորդը,

4.5.22. ապահովագրված գույքի վնասումը՝ խոռոչների, քերծվածքների, փոսերի, մաշվածության տեսքով, ներկածածկույթի վնասումը (շահագործման բնույթի վնասվածքները),

4.5.23. այրման-քսանյութերի, քիմիկատների, սառեցնող հեղուկների, ապահովագրված գույքի ծախսվող մասերի՝ հորատիչների, դանակների, ատամների, կտրող շեղբերի, սղոցների շեղբերի և հղկող սկավառակների, փոխակրիչ գոտիների, մաղերի, ճկուն խողովակների, պարանների, գոտիների, խոզանակների, փշերի, շղթաների, թրթուրների, մալուխների և այլնի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը: Սույն բացառությունը չի տարածվում ապահովագրված գույքի հետ ծախսվող մասերի կորստի, ոչնչացման կամ վնասվածքի դեպքերի վրա, որի վրա այդ ծախսվող մասերը տեղադրված են եղել,

4.5.24. ապահովագրված գույքի արատավոր մասերի, հանգույցների և պահեստամասերի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը,

4.5.25. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը գործարանային արատի կամ վերականգնողական վերանորոգման ընթացքում թույլ տված արտադրական թերության հետևանքով,

4.5.26. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը փորձարկումների հետևանքով կամ ընթացքում,

4.5.27. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրական ռիսկը էականորեն բարձրացնող հանգամանքների առաջացման հետևանքով, որոնք հանդիսացել են այն վնասի առաջացման պատճառ, որոնց մասին Ապահովադիրը սույն Պայմաններով սահմանված կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին կամ որոնց վերացման անհրաժեշտության մասին Ապահովագրողը համաձայնեցված ժամկետում տեղեկացրել է Ապահովադրին (Շահառուին),

4.5.28. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը՝ ալիքների ջրով հեղեղվելու հետևանքով (օվկիանոսի կամ ծովի մակարդակի պարբերական տատանումներ),

4.5.29. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը բնական մաշվածության, մշտական շահագործման գործոնների ազդեցության (կոռոզիայի, էրոզիայի, օքսիդացման, նստվածքի, կավիտացիայի և այլն), նյութի հանգած լինելու հետևանքով, ցանկացած ազդեցության հետևանքով, որը կրում է երկարատև, աստիճանական կամ կուտակային բնույթ,

4.5.30. ապահովագրված գույքի կորուստը, ոչնչացումը կամ վնասումը ապահովագրված գույքի ներքին խափանումների (արտաքին գործոններով չպայմանավորված), մեխանիկական կամ էլեկտրական անսարքությունների, շարքից դուրս գալու, ծրագրային ապահովման կորստի, ոչնչացման կամ վնասման, սառեցնող կամ այլ հեղուկների սառեցման, անորակ քսուքի կամ յուղի կամ սառեցնող հեղուկի բացակայության հետևանքով: Միևնույն ժամանակ, եթե նման վնասվածքների և խափանումների հետևանքով տեղի է ունեցել, որպես հետևանք կողաշրջում, բախում կամ այլ արտաքին ազդեցություն ապահովագրված գույքի վրա, որը հանգեցրել է դրա ոչնչացման կամ վնասի, ապա նման վնասը ենթակա է փոխհատուցման,

4.5.31. վարձակալության, լիզինգի, վարձույթի փոխանցվող գույքի ապահովագրության դեպքում ապահովագրված գույքի կորուստը՝ Վարձակալի, Լիզինգառուի կողմից ապահովագրված գույքը Ապահովադրին չվերադարձնելու հետևանքով:

## ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

5.1 Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բայց չի կարող գերազանցել դրա գտնվելու վայրում Պայմանագրի կնքման օրվա դրությամբ շինարարական և հատուկ տեխնիկայի իրական (ապահովագրական կամ շուկայական) արժեքը: Շինարարական և հատուկ տեխնիկայի ապահովագրական արժեքը գերազանցող Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի մասով Պայմանագիրն առոչինչ է:

5.2 Ապահովագրական գումարը կարող է սահմանվել ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորով կամ Պայմանագրում նշված օբյեկտների (խմբերի, գույքի դասակարգումների) համակցությամբ, ինչպես նաև կարող է սահմանվել ապահովագրական ռիսկով կամ մեկ ապահովագրական պատահարի համար:

5.3 Մեկ Պայմանագրով գույքի խմբերի ապահովագրության դեպքում Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական գումարը սահմանվում է ընդհանուր և ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորով: Ընդ որում, ընդհանուր ապահովագրական գումարը Պայմանագրով/Վկայագրով սահմանվում է ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորի գծով ապահովագրական գումարների հանրագումարով:

5.4 Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ՝ գույքի ապահովագրական արժեքը չգերազանցող չափով:

5.5 Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է ապահովագրված գույքի իրական արժեքից (ոչ լրիվ ապահովագրություն), ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցում է Ապահովադրին (Շահառուին) հասցված վնասը՝ ապահովագրական գումարի և իրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:

Ընդ որում, Պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական հատուցման այլ հաշվարկ՝ իրական արժեքը ապահովագրական գումարին գերազանցելու դեպքերում, բայց, բոլոր դեպքերում, ապահովագրական հատուցումը չի կարող լինել ավել ապահովագրական գումարից և/կամ իրական արժեքից:

5.6 Եթե Պայմանագրում նշված ապահովագրական գումարն ավելի բարձր է քան ապահովագրված գույքի իրական արժեքը, ապա Պայմանագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է Պայմանագրի կնքման պահին գույքի իրական արժեքը: Այս դեպքում ապահովագրավճարի ավել վճարված մասը վերադարձման ենթակա չէ:

5.7 Պայմանագրում հատուկ նախատեսված լինելու դեպքում, Պայմանագիրը կարող է կնքվել նաև «Առաջին ռիսկի» պայմանով, երբ իրական արժեքը ապահովագրական գումարը գերազանցելու դեպքերում, ապահովագրական հատուցումը հաշվարկվում է առանց հաշվի առնելու

ապահովագրական գումարի և ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի համամասնությունը, այսինքն՝ իրական վնասի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) և գույքի իրական (շուկայական) արժեքը:

5.8 Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը կազմելու ամսաթվից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

5.9 Պայմանագրով կարող են սահմանվել Ապահովագրողի կողմից հատուցման սահմանաչափեր՝ Պայմանագրով որևէ ապահովագրական ռիսկի համար նախատեսված ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության Պայամանագրի ողջ ժամանակահատվածի համար:

5.10 Հատուցման սահմանաչափերը կարող են սահմանվել մեկ ապահովագրական պատահարի համար հաշվարկով կամ Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի համար:

5.11 Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով, որի համարժեքը համարվում է ՀՀ դրամով համապատասխան գումարը (այսուհետ՝ «ապահովագրություն արժութային համարժեքով»):

5.12 Եթե Պայմանագրում համապատասխան ռիսկի համար ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթով, ապա ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում կիրառվում է հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը: Եթե տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը ապահովագրական հատուցման օրվա դրությամբ 20% և ավելի բարձր է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան արտարժույթի փոխարժեքից, ապա ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի տվյալ արտարժույթի փոխարժեքին ավելացրած 20%:

5.13 Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

5.14 Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

5.15 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

5.16 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի ներկայացուցչին (այդ թվում ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

5.17 Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

5.18 Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

5.19 ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագրիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

5.20 Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

5.21 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

5.22 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

## ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

6.1 Պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

6.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

6.3 Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե շինարարական և մասնագիտացված տեխնիկային պատճառված վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

6.4 Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

## ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

7.2 Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել դրա կնքման ժամկետից շուտ:

7.3 Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո,

բ) Ապահովադրի (Շահառուի) կողմից գույքի օտարման,

գ) Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

դ) կողմերի համաձայնությամբ,

ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.4 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:

7.5 Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Պայմանագրի գործողության օրեր * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

7.6 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Պայմանագրի գործողության օրեր * Պայմանագրի չլրացած օրեր, բացառությամբ Կանոնների 6.17 և 6.19 կետերում սահմանված դեպքերում:

7.7 Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

7.8 Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

8.1 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են ապահովագրական ռիսկը:

8.2 Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների փոփոխություններ են համարվում Պայմանագրում կամ Դիմումում և/կամ նկարագրությունում համաձայնեցված ապահովագրության հանգամանքները, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝

- ապահովագրված գույքի օտարումը հօգուտ այլ անձի,
- ապահովագրված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի փոխանցումը այլ անձի
- ապահովագրված գույքի հանձնումը վարձակալության, ենթավարձակալության, լիզինգի, գրավի, վարձույթի,
- ապահովագրված գույքի գտնվելու վայրի փոփոխումը,
- ապահովագրված գույքի պահպանման պայմանների փոփոխությունը,
- լրացուցիչ սարքավորման տեղադրումը,
- մասնագիտացված տեխնիկայի հաշվառումից հանելը կան վերագրանցելը պետական գրանցման մարմիններում,
- հակաառևանգման համակարգերի հեռակառավարման վահանակների, մեխանիկական հակաառևանգման համակարգերի բանալիների կորուստը (այն դեպքում, երբ Պայմանագիրը/Վկայագիրը կնքվել է մասնագիտացված տեխնիկան հակաառևանգման համակարգով օգտագործելու պայմանով):

8.3 Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջելու Պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի մեծանալուն համարժեք լրացուցիչ վճարում:

8.4 Պայմանագրի պայմանների փոփոխումից կամ ապահովագրավճարի լրավճարումից Ապահովադրի հրաժարվելը հանդիսանում է Ապահովադրի Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համաձայնություն: Պայմանագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարեցված այն պահից, երբ Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրի պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից:

8.5 Եթե Ապահովադիրը (Շահառուն) չի հայտնում Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին հայտնած էական հանգամանքների փոփոխության մասին, և եթե այդ հանգամանքները հետագայում բերում են վնասի առաջացման, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է Կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարած՝ ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքներն ի հայտ գալու պահից:

8.6 Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու լուծել Պայմանագիրը, եթե ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների մասին տեղեկանալու պահին դրանք արդեն վերացել են:

## ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9.1 Ապահովագրական հատուցման չափը որոշվում և սահմանափակվում է պատճառված վնասի մեծությամբ, բայց չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը): Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը իրականացվում է նվազեցնելով Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը (եթե այդպիսին Պայմանագրով նախատեսված է):

9.2 Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրելուց, վնասված ապահովագրված գույքը Ապահովագրողի կողմից զննելուց և զննման ակտը կազմելուց, հանգամանքների, պատճառների, հասցված վնասի չափի և բնույթի որոշումից և Ապահովագրողի կողմից իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելուց հետո: Ընդ որում,

ապահովագրական պատահար ի հայտ գալու պատճառները և վնասի չափը հիմնավորող փաստաթղթերի տրամադրման պարտականությունը կրում է Ապահովադիրը (Շահառուն):

9.3 Յուրաքանչյուր ապահովագրական հատուցում վճարելուց հետո համապատասխան օբյեկտի/ռիսկի ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) հատուցման ամսաթվից ինքնաշխատ նվազեցվում է կատարված հատուցման չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Հետագա հատուցումները իրականացվում են ապահովագրված գույքի իրական արժեքի և մնացորդային ապահովագրական գումարի համամասնությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.4 Եթե գույքը ապահովագրված է իրական արժեքով (ապահովագրական արժեք), ապահովագրական հատուցում ստանալուց հետո, Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադիրը կարող է վերականգնել Պայմանագրում նշված ապահովագրական գումարը՝ լրավճարելով համապատասխան չափի ապահովագրավճար Պայմանագրի չլրացած օրերի համար, որից հետո իրականացվելիք հատուցումների վրա չի կիրառվի համամասնություն:

9.5 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է դրամական ձևով:

9.6 Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից ապահովագրված գույքի զննման արդյունքում հաստատված տվյալների և վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

9.7 Ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է հաշվի առնելով՝

- վնասի չափը,
- Ապահովագրողի հատուցման սահմանաչափը,
- «լրիվ» կամ «ոչ լրիվ» ապահովագրության կիրառումը,
- ֆրանշիզաները,
- ամորտիզացիոն մաշվածությունը,
- մնացորդային արժեքը:

9.8 Ապահովագրական հատուցումը վճարվում է՝

9.8.1 «Առևանգում» ռիսկի գծով ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում, ապահովագրական հատուցման չափը որոշվում է ելնելով տվյալ ռիսկի գծով սահմանված ապահովագրական գումարից՝ նվազեցնելով ֆրանշիզան, իրականացված հատուցումները (ագրեգատային ապահովագրության դեպքում) և ամորտիզացիոն մաշվածությունը:

9.8.2 ապահովագրված գույքի վնասման դեպքում վերականգնողական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը) և ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքը:

9.8.3 Վերականգնողական ծախսերը ներառում են.

- վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ նյութերի և պահեստային մասերի ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների ծախսերը,
- մինչև վերանորոգման վայր նյութերի և պահեստային մասերի առաքման ծախսերը,
- այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված գույքի անմիջապես ապահովագրական պատահարից առաջ գտնվելու վիճակը վերականգնելու համար:

9.8.4. Վերականգնողական ծախսերը որոշելու ժամանակ հաշվի է առնվում վնասված ապահովագրված գույքի վերականգնման (վերանորոգման) ընթացքում փոխարինման ենթակա բաղադրիչների, մասերի, հանգույցների և դետալների մաշվածությունը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Վերականգնողական ծախսերը հատուցվում են համապատասխան տարածաշրջանում ձևավորված միջին գների հիման վրա:

9.8.5. Վերականգնողական աշխատանքների ծախսերը չեն ներառում՝

- ապահովագրված գույքի փոփոխման և/կամ բարելավմանն ուղղված լրացուցիչ ծախսերը,
- ապահովագրված գույքի ժամանակավոր կամ օժանդակ վերանորոգումից առաջացած ծախսերը,

- ապահովագրած գույքի պրոֆիլակտիկ սպասարկման կամ երաշխիքային վերանորոգման հետ կապված ծախսերը, ինչպես նաև վերանորոգման հետ կապված այլ ծախսերը, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված չէ ապահովագրական պատահարով,

- վերականգնողական աշխատանքներն արագացնելու, արտաժամյա վճարման, նյութերի և պահեստամասերի արագ առաքման ծախսերը, եթե Պայմանագրով նախատեսված չէ 006 Վերապահման կիրառումը, օդային տարնսպորտով փոխադրումը, եթե Պայմանագրով նախատեսված չէ 007 Վերապահման կիրառումը,

- վնասված (ոչնչացված) ապահովագրված գույքի բեկորների (մնացորդների) հեռացման (ապամոնտաժման) ծախսերը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

- հողի տակ, ջրամբարների (լճերի, ջրամբարների, լճակների) և ջրահոսքերի (գետերի, ջրանցքների) եզրերին կամ մակերեսին աշխատող, կամ բեռնանավերի կամ պոնտոնների վրա տեղադրված տեխնիկայի և սարքավորումների փրկարարական ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չէ 015 Վերապահման կիրառումը,

- ապահովագրված գույքի առանձին մասերի, դետալների և աքսեսուարների վերանորոգման կամ փոխարինման հետ կապված ծախսերը՝ դրանց մաշվածության կամ տեխնիկական խոտանի հետևանքով,

- բացակայող կամ վնասված մասերի, ագրեգատների արժեքը, որոնց բացակայությունը կամ վնասվածքը դիտարկվող ապահովագրական պատահարի հետ պատճառահետևանքային կապի մեջ չէ,

- հանգույցների և ագրեգատների արժեքը վերանորոգման փոխարեն փոխարինելու դեպքում՝ դրանց վերականգնման համար պահեստամասերի և դետալների բացակայության պատճառով,

- գույքի իրացումից կամ գործառնական նշանակությամբ օգտագործումից առաջացած տարեկան մնացորդների մնացորդային արժեքը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

- Ապահովադրի (Շահառուի)սեփական ուժերով ապահովագրված գույքը վերանորոգելու դեպքում ստացած շահույթը,

- ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած և ապահովագրված գույքի վերականգնմանը խոչընդոտող բեկորների և այլ նյութերի մաքրման և տեղափոխման ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

- անհրաժեշտ ծախսերից ավել կատարված այլ ծախսերը։

9.8.6. Եթե Ապահովադիրը (Շահառուն, Լիզինգառուն, Վարձակալը) շարունակում է շահագործել ապահովագրական պատահարից հետո վերանորոգման կարիք ունեցող գույքը, ապա Ապահովագրողը հատուցում է վնասը այնքանով, որքանով վնասը չի առաջացել նման շահագործման հետևանքով։

9.8.7. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, վնասի չափը ապահովագրված գույքի վնասվելու դեպքում որոշվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

- ապահովագրված գույքին պատճառված վնասի հաշվարկում հաշվի են առնվում և հատուցման ենթակա են միայն այն դետալների, հանգույցների և ագրեգատների փոխարինման և վերանորոգման արժեքը, որոնք վնասվել են ապահովագրական պատահարի հետևանքով,

- եթե տեխնիկապես հնարավոր է (վնասված դետալի, ագրեգատի, հանգույցի վերականգնումը հնարավոր է դրանց նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը չեն գերազանցում տվյալ դետալի, ագրեգատի կամ հանգույցի շուկայական արժեքի 80 տոկոսը) ապահովագրական պատահարի արդյունքում վնասված ապահովագրված գույքի որևէ դետալի, ագրեգատի կամ հանգույցի վերականգնումը, ապա պատճառված վնասի չափի մեջ հաշվարկում է այդ դետալի, ագրեգատի կամ հանգույցի վերանորոգման ծախսերը,

- վերանորոգման աշխատանքների ծախսերը փոխհատուցվում են ապահովագրական պատահարի ամսաթվի դրությամբ վերանորոգման անցկացման տարածքում գործող նույնանման աշխատանքների

միջին գներով, իսկ Ապահովադրի (Շահառուի) ուժերով վերանորոգման իրականացման դեպքում՝ վերանորոգման ինքնարժեքով, կախված այն բանից, թե այդ գումարներից որն է պակաս;

- եթե վերանորոգումն իրականացնելիս կատարվում է վնասված ապահովագրված գույքի արդիականացում կամ վերասարքավորում, այդ թվում՝ օգտագործվում են բարելավված հատկանիշներ (որակ, ծառայության ժամկետ, հզորություն և այլն) ունեցող դետալներ, հանգույցներ և նյութեր, ապահովագրական հատուցումը վճարվում է վերանորոգման ծախսերի այն չափով, եթե այն կատարվեր այնպիսի մասերի, հանգույցների, ագրեգատների և նյութերի կիրառմամբ, որոնք իրենց հատկանիշներով համանման են այն մասերին, հանգույցներին, ագրեգատներին և նյութերին, որոնք ապահովագրական պատահարի ամսաթվի դրությամբ տեղադրված են եղել ապահովագրված գույքի վրա:

9.8.8. Գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցումը տրվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքի չափով՝ նվազեցնելով ֆրանշիզան, իրականացված հատուցումները (ագրեգատային ապահովագրության դեպքում) ամորտիզացիոն մաշվածությունը և հետագա օգտագործման համար պիտանի մնացորդների գումարը, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

Գույքի ամբողջական կորուստ/ոչնչացում է համարվում, եթե վնասված ապահովագրված գույքի վերականգնման ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի 80% -ը:

Ապահովագրված գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի Ապահովագրողի համաձայնությամբ հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից՝ հօգուտ Ապահովագրողի: Այդ դեպքում, ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի չափով, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը): Ընդ որում, մինչև ապահովագրական հատուցումը վճարելը, Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի հետ կնքել ոչնչացած գույքի կամ դրա մնացորդների իրավունքի փոխանցման մասին համաձայնագիր:

9.8.9. Մաշվածության նորմերը որոշվում են համաձայն նորմատիվ իրավական ակտերի դրույթների կամ փորձագիտական գնահատման հիման վրա: Եթե Պայմանագրով ապահովագրական գումարը սահմանվում է մնացորդային հաշվեկշռային արժեքի չափով, ապա մաշվածությունը հաշվարկվում է հաշվապահական տվյալների համաձայն՝ կուտակված արժեզրկմանը հավասար, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

9.8.10. Ապահովագրողի կողմից փոխհատուցման ենթակա վնասը նվազեցնելու նպատակով կատարված ծախսերը (կրակի մարման կամ կարկի, վթարների տարածման կանխման, և այլն), եթե այդ ծախսերը եղել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումներով, հատուցման ենթակա են, եթե անգամ համապատասխան միջոցառումներն անցել են ապարդյուն: Այդպիսի ծախսերը հատուցվում են ապահովագրական գումարի ապահովագ արժեքի նկատմամբ համամասնությամբ՝ անկախ այն բանից, որ այլ վնասների հատուցման գումարի հետ միասին դրանք կարող են գերազանցել ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը):

Եթե Պայմանգրով այլ բան նախատեսված չէ, վնասի նվազեցման նպատակով Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա ծախսերը, փոխհատուցվում են ոչ ավել, քան ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված գույքի ապահովագրական գումարի (հատուցման սահմանաչափի) 10 (տասը) տոկոսը:

9.8.11. Ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվում բացակայող կամ վնասված դետալների կամ ագրեգատների արժեքը, որոնց բացակայությունը կամ վնասվելը ուղիղ կապ չունի դիտարկվող Ապահովագրական պատահարի հետ:

9.9. Եթե, ապահովագրական գումարը սահմանված է Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի համար (ագրեգատային ապահովագրական գումար), ապա Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (լրացուցիչ ծախսերի հետ միասին, եթե դրանց հատուցումը նախատեսված է Պայմանագրով)՝ հաշվի առնելով Կանոնների 9.8.10. կետի դրույթը:

9.10. Եթե Ապահովագրական գումարը սահմանված է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար (ոչ ագրեգատային ապահովագրական գումար), ապա յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման գումարի չափը որոշվում է ելնելով ապահովագրական գումարից (լրացուցիչ ծախսերի հետ միասին, եթե դրանց հատուցումը նախատեսված է Պայմանագրով)՝ հաշվի առնելով Կանոնների 9.8.10 կետով նախատեսված դրույթը, անկախ նախկինում հատուցված ապահովագրական պատահարներից:

9.11. Եթե, ապահովագրական պատահարի պահին գույքն ապահովագրված է եղել մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել դրա իրական արժեքը: Ընդ որում, ապահովագրողներից յուրաքանչյուրն ապահովագրական հատուցումը վճարում է նշված գույքի գծով Ապահովադրի կողմից կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի ապահովագրական գումարների նկատմամբ իր կնքած ապահովագրության պայմանագրի ապահովագրական գումարի համամասնությամբ:

9.12 Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասը հատուցվել է երրորդ անձանց կողմից, Ապահովագրողը հատուցում է միայն վճարման ենթակա հատուցման գումարի և երրորդ անձանց կողմից հատուցված գումարի տարբերությունը:

9.13 Այն դեպքում, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո հայտնի է դառնում, որ Ապահովադիրը (Շահառուն) իրավունք չուներ ստանալ ապահովագրական հատուցում, վերջինս պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը Ապահովագրողին՝ Ապահովագրողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:

9.14 Կողմերի միջև վնասի պատճառների և վնասի չափի մասին վեճերի առաջացման դեպքում, Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր հաշվին անցկացնել փորձաքննություն: Կողմերից մեկի անցկացրած փորձաքննության եզրակացությունը պարտադիր բնույթ չի կրում մյուս Կողմի համար:

9.15 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը՝ մինչև Ապահովագրողին ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելը պարտավոր է ամբողջությամբ վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի տարաժամկետ վճարման դեպքում), եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.16 Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից Ապահովադրի (Շահառուի) հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման օրը:

9.17 Եթե վերանորոգման արժեքը հաշվի, հրահանգ-պատվերի կամ հաշվարկման մեջ նշված է արտարժույթով կամ ապահովագրական գումարը Պայմանագրում նշված է արտարժույթով, ապահովագրված գույքի կորստի կամ լրիվ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս կիրառվում է ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը: Եթե, ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրական գումարի արժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը բարձր է 20 և ավելի տոկոսով, ապա ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ կիրառվում է ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրական գումարի արժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի փոխարժեքը՝ ավելացված 20 տոկոսով:

Պայամանգրով կարող է սահմանվել արտարժույթի փոխարժեքի մեծության փոփոխման այլ սահմանափակում:

9.18 Եթե առևանգված ապահովագրված գույքը վերադարձվել է Ապահովադրին (Շահառուին), վերջինս պարտավոր է ապահովագրված գույքի գտնվելու պահից մեկ ամսվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել առևանգված ապահովագրված գույքի համար ստացած ապահովագրական հատուցումը: Եթե ապահովագրված գույքին պատճառվել է վնաս, ապա վնասի չափը հանվում է վերադարձվող ապահովագրական հատուցման գումարից:

9.19 Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցում վճարել Ապահովադրին, եթե.

1) Ապահովադիրն ապահովագրական պատահարն իրեն հայտնի դառնալու պահից, Պայմանգրով/Վկայագրով սահմանված ժամկետում և կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին այն ի հայտ գալու մասին,

2) Ապահովադիրը դիտավորյալ չի ձեռնարկել ողջամիտ և հասանելի միջոցներ՝ հնարավոր վնասը նվազեցնելու համար,

3) Ապահովադիրն Ապահովագրողին կամ պատահարը քննող մարմնին ներկայացրել է ակնհայտ կեղծ, կամ իրականությանը չհամապատասխանող, կամ հակասական տեղեկություններ և/կամ փաստաթղթեր,

4) Ապահովադիրն Ապահովագողին չի փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից իրեն անցած պահանջի իրավունքի (սուբրոգացիա) համար,

5) վնասված գույքի վերանորոգումը և (կամ) դրա մնացորդների խոտանումը, որն իրականացվել է մինչև սույն Պայմաններով սահմանված կարգով վնասված գույքի Ապահովագրողի զննությունը, թույլ չի տալիս որոշել ապահովագրական պատահարի փաստը և վնասի չափը,

6) ապահովագրական պատահարից հետո վնասված գույքի հետվթարային վիճակը չի պահպանվել և կատարվել են ցանկացած տիպի փոփոխություններ կամ վերանորոգման աշխատանքներ՝ առանց Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու և Ապահովագրողի կողմից զննում անցկացնելու,

7) Ապահովադրի (Շահառուի) կողմից չեն կատարվել Պայմանագրով և/կամ Կանոններով սահմանված պարտականությունները,

8) Կանոններով նախատեսված այլ դեպքերում:

9.20 Ապահովագրական հատուցման տրամադրման մերժման մասին որոշումը Ապահովադրին տրամադրվում է գրավոր՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

## ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 **Ապահովադիրն իրավունք ունի՝**

ա) Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

բ) ծանոթանալ Ապահովագրության պայմաններին,

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

դ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցում,

ե) Պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցրած պայմանագիրը ճանաչվում է անվավեր և նրա հիման վրա հատուցումներ չեն կատարվում: Պայմանագրի գործողության ընթացքում, Պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից գանձել Պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար:

10.2 **Ապահովադիրը պարտավոր է՝**

ա)Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում վճարել ապահովագրավճարները,

բ) Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին՝ ապահովագրության դիմում-հարցաթերթիկում նշելով ռիսկերը, ապահովագրական գումարները, ապահովագրության պայմանագրերի համարները և դրանց գործողության ժամկետները,

գ) Պայմանագրի կնքումից առաջ ապահովել ապահովագրության օբյեկտի զննության և լուսանկարման գործընթացը,

դ) ռիսկի վերագնահատման համար նշանակություն ունեցող նոր հանգամանքների առաջ գալու դեպքում՝ դրանց մասին անմիջապես հայտնել Ապահովագրողին,

ե) պահպանել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված, Ապահովագրության օբյեկտին առնչվող համապատասխան անվտանգության նորմերը և կանոնները,

զ) Պայմանագրով և Կանոններով սահմանված ժամկետում Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի առաջացման մասին, ինչպես նաև ներկայացնել ապահովագրական դեպքի պատճառների և հանգամանքների վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

է) ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

ը) Ապահովագրողին հնարավորություն տալ զննել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված գույքը, փորձաքննություն կատարել վնասի առաջացման պատճառների և հետևանքների բացահայտման ուղղությամբ,

թ) անհապաղ, բայց ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին (ՀՀ Ոստիկանություն, Պետական հակահրդեհային ծառայություն, գազի վթարային ծառայություն, փրկարար ծառայություն, ԱԻՆ ստորաբաժանում և այլն)՝ հետագայում ապահովելով տեղի ունեցած պատահարի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի ներկայացումը,

ժ) առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չտալ խոստումներ և չանել առաջարկություններ կորստի կամ վնասի կամավոր հատուցման վերաբերյալ,

ժա) տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողի ներկայացուցիչներին Պայմանագրում նշված հեռախոսահամարներով՝ հնարավորություն տալով Ապահովագրողի ներկայացուցչին դեպքի վայրում զննելու տեղի ունեցած վթարը, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, չհաշված ոչ աշխատանքային օրերը, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

ժբ) ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելիս՝ Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը՝

- Պայմանագիրը,
- Ապահովագրողի մոտ Ապահովադրի (Շահառուի) շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր,
- Դիմումատուի անձը հաստատող փաստաթուղթը,
- ապահովագրական հատուցում վճարելու համար գրավոր դիմում՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով,
- բանկային տվյալներ, եթե ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է հաշվեհամարին՝ անկանխիկ փոխանցման միջոցով,

- փաստաթղթեր, որոնք հաստատում են Ապահովադրի (Շահառուի) ապահովագրված գույքի նկատմամբ պահպանման շահը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության օրվա դրությամբ:

Այդպիսի փաստաթղթերին, այդ թվում, պատկանում են՝

- ինքնագնաց մեքենայի և այլ տեսակի տեխնիկայի անձնագիրը (կամ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը),

- մասնագիտացված տեխնիկայի (կամ տրանսպորտային միջոցի) գրանցման վկայականը,

- մասնագիտացված տեխնիկայի սեփականության իրավունքի վկայականը,

- մասնագիտացված տեխնիկայի առուվաճառքի (մատակարարման) պայմանագիրը,

- վարձակալության, լիզինգի պայմանագրերը,

- ապահովագրված գույքի կառավարումը, շահագործումը և տեխնիկական վիճակը հաստատող փաստաթղթերը:

Այդպիսի փաստաթղթերին, այդ թվում, պատկանում են՝

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադադարձության ի հայտ գալու պահին ապահովագրված գույքը վարող (կառավարող) անձի վարորդական վկայականը կամ վկայականը,

- ուղեգիր կամ ապահովագրված գույքը վարելու իրավունք տվող փաստաթուղթ (եթե, ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալու պահին, ապահովագրված գույքը վարում (կառավարում) էր դրա սեփականատեր չհանդիսացող անձը),

- աշխատանքները կատարելու թույլտվությունը հավաստող փաստաթղթեր, որոնք պահանջվում այն իրականացնող անձի համար (եթե ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալու պահին այդպիսի աշխատանքներ կատարվել են), ենթակապալի, կապալի պայմանագիր

կամ աշխատանքների իրականացման առաջադրանք,

- ապահովագրված գույքի օգտագործմամբ աշխատանքներ իրականացնելիս անվտանգության տեխնիկայի վերաբերյալ փաստաթղթեր (մասնագիտացված տեխնիկան վարող (կառավարող) անձի աշխատանքային հրահանգը, անվտանգության տեխնիկայի վերաբերյալ հրահանգի մատյանից քաղվածք),

- տեխնիկական փաստաթղթեր (գույքը շահագործման հանձնելու ակտ, անձնագրեր, հավաստագրեր, արտադրողի երաշխիքային կտրոններ, տեխնիկական զննություն անցնելու կտրոն, գույքի շահագործման և սպասարկման հրահանգներ, տեխնիկական վիճակի մատյան, վերանորոգման անցկացման պլաններ),

- ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթեր՝

1) օրենսդրությամբ համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից տրված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց վավերացված պատճենները (տեղեկանքներ, արձանագրություններ, որոշումներ, վճիռներ, դատավճիռներ և այլն) որոնցում ամբողջությամբ նշված է.

- տվյալ պատահարի առաջացման վայրը, տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, պատճառները, հանգամանքները և հետևանքները, նշված մարմիններին (պաշտոնատար անձանց) տվյալ պատահարի վերաբերյալ տեղեկացնելու և վերջիններիս պատահարի վայր ժամանելու ամսաթիվը և ժամը, վնասված (ոչնչացված) ապահովագրված գույքի անվանումը, վնասների բնույթը և ցանկը,

- ապահովագրված գույքի սեփականատիրոջ լրիվ անվանումը,

- տեղի ունեցած իրավախախտման էությունը և վարչական տույժի ենթարկելու որոշումը (վարչական իրավախախտման դեպքում), կամ այն իրավունքի նորմերը, որոնց համապատասխան

հարուցվել է քրեական գործ, այլ տեղեկություններ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է նշված լինեն նման բնույթի փաստաթղթերի մեջ,

2) «Տարերային աղետներ» և «Երկրաշարժ» ռիսկերի գծով՝ օդերևութաբանական (սեյսմիկ) ծառայության պետական հաստատության կամ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) փրկարար ծառայության կողմից համապատասխան տարերային (բնական) աղետի բնույթը և տևողությունը հաստատող փաստաթղթեր, էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովող ընկերության տեղեկանքը՝ ամպրոպային երևույթների հետևանքով առաջացած լարման տատանումների վերաբերյալ,

3) «Վթար» ռիսկի գծով՝ տեղական հանձնաժողովի կողմից կազմված վթարի նախաքննության ակտը, տեխնիկական հանձնաժողովի կազմած վթարի պատճառների հետաքննության ակտը, իրադարձության քննության վերաբերյալ իրավասու մարմիններից փաստաթղթերը, որոնցում նշված են պատահարի ժամի, վայրի, բնույթի, հանգամանքների և պատճառների մասին, մասնագիտացված տեխնիկայի մակնիշի, դրա հաշվառման (գրանցման) համարանիշի և (կամ) գործարանային համարի վերաբերյալ,

4) «Ինժեներական համակարգերի վթար» ռիսկի գծով՝ ինժեներական համակարգեր և ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների ակտերը, որոնք հաստատում են տվյալ համակարգերի ժամի, տեղի, շարքից դուրս գալու պատճառների, մեղավոր կողմի որոշման մասին տեղեկությունները,

5) «Թռչող սարքերի անկում» ռիսկի գծով՝ պետական (միջգերատեսչական) հանձնաժողովի եզրակացությունը (հաշվետվությունը)՝ թռիչքային պատահարի փաստի հետաքննության վերաբերյալ, համապատասխան իրավասու մարմինների փաստաթղթերը, որոնք հաստատում են տեղի ունեցած իրադարձության փաստը և պատճառները,

6) իրավասու մարմինների և (կամ) ծառայությունների կողմից տրամադրված, պատահարների ժամի, վայրի, բնույթի և պատճառների մասին տեղեկատվությունը հաստատող փաստաթղթեր,

7) ապահովագրված գույքին հասցված վնասի փաստի վերաբերյալ կազմված (հրապարակված) ակտեր, հրամաններ, կարգադրություններ և այլ փաստաթղթեր:

- ապահովագրված գույքին պատճառված վնասի չափը որոշելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Այդպիսի փաստաթղթերի շարքին են դասվում՝

1) ոչնչացված կամ վնասված գույքի ցանկը՝ վնասի բնույթի վերաբերյալ նշումով,

2) ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու օրվա դրությամբ վնասված կամ ոչնչացված գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը՝ ապահովագրված գույքի արժեքի վերաբերյալ հաշվապահական տեղեկանք, քաղվածք հաշվեկշռից, հիմնական միջոցների հաշվառման ակտերը,

3) գույքագրման ակտերը (ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու օրվան ամենամոտ ամսաթվով կազմված և գույքի վնասման կամ ոչնչացման փաստով կազմված),

4) ապահովագրված գույքի առուվաճառքի, մատակարարման, վարձակալության, լիզինգի պայմանագրերը,

5) անկախ փորձագետի եզրակացությունը գույքի արժեքի վերաբերյալ,

6) փաստաթղթերը, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի արդյունքում ոչնչացված գույքի և հանգույցների, մասերի, ագրեգատների, նյութերի ձեռքբերման ծախսերը,

7) ապահովագրված գույքի դեֆեկտային (գործարկման) հայտարարագիրը, ակտերը և դիագնոստիկայի արձանագրությունները,

8) փաստաթղթերը, որոնք հաստատում են գույքի հաշվարկված մաշվածության չափը ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու ամսաթվին ամենամոտ ամսաթվով,

9) հիմնական միջոցների դուրսգրման ակտերը,

10) վնասված գույքը խոտանման հանձնելու և (կամ) գույքի մնացորդների ոչնչացման փաստը հաստատող փաստաթղթերը (եթե այդպիսի ոչնչացումը համաձայնեցված է եղել Ապահովագրողի հետ),

11) վնասված գույքի վերանորոգման նպատակահարմարության և հետագա օգտագործման մասին եզրակացությունը (տեխնիկական փորձաքննություն),

12) վնասի չափը որոշելու համար Ապահովադրի (Շահառուի) կողմից ներգրավված փորձագիտական կազմակերպությունների հետ պայմանագրերը,

13) վնասված գույքի վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների համար կատարված ծախսերը հաստատող փաստաթղթերը,

Ապահովագրողն իրավունք ունի կրճատել կամ ընդլայնել վերը ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

- Գրավառուի (Շահառուի) օգտին Պայմանագիր/Վկայագիր կնքելու դեպքում՝ վարկային պայմանագիրը կամ այլ պայմանագիր, որի կատարումն ապահոված է գրավով, գրավի պայմանագիրը, Ապահովադրի վարկային պայմանագրով կամ այլ պայմանագրով, որի կատարումն ապահոված է գրավով՝ Շահառուի (Վարկատուի) նամակը պարտքի չափի վերաբերյալ նշումով,
- անհրաժեշտության դեպքում, Ապահովագրողի գրավոր պահանջով լրացուցիչ փաստաթղթեր, որոնք վերաբերում են տեղի ունեցած իրադարձության հանգամանքներին, և անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից տեղի ունեցած իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Եթե համապատասխան իրավասու մարմինները հրաժարվել են տրամադրել Ապահովադրին որևէ փաստաթուղթ, ապա Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է տրամադրում իր կողմից վերոհիշյալ մարմիններին ուղարկված համապատասխան հարցման և դրա գրավոր պատասխանի պատճենը,

- 10.3.10. անհրաժեշտության դեպքում Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին տրամադրել լիազորագիր Ապահովադրի (Շահառուի) շահերը պաշտպանելու և վնասի հատուցման գործընթացի կարգավորման գործը վարելու համար,

ժբ) տեղի ունեցած պատահարի մասին Ապահովագրողին հայտնել հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն ծանուցելու պահի դրությամբ (ամսաթիվը, ժամը և վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն)

ժգ) պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և կատարել նրա ցուցումները,

ժդ) ապահովագրական պատահարից հետո, մինչև ապահովագրական պատահարի հետ կապված դիմումի կարգավորումը՝ չվերանորոգել ապահովագրված գույքը, պահպանել դրա վրա առկա բոլոր վթարային հետքերը և ապահովագրված գույքը ներկայացնել Ապահովագրողին հետվթարային վիճակում,

ժե) Ապահովագրողի կողմից նշված ժամկետներում Ապահովագրողին և/կամ անկախ փորձագետին տրամադրել ապահովագրված գույքի զննումն իրականացնելու հնարավորություն՝ վնասի չափը որոշելու նպատակով,

ժզ) մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելը, ապահովագրված գույքը պահպանել (վնասված և չվնասված) այն տեսքով, որում այն հայտնվել է ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը տեղի ունենալուց հետո: Ապահովադիրն իրավունք ունի

ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության վայրում փոփոխությունների կատարել այն դեպքում, եթե դա պահանջվում է իրավասու մարմինների կողմից՝ ելնելով անվտանգության կամ վնասի չափի նվազեցման միտումներից: Այն դեպքում, երբ անհնար է ապահովագրված գույքը պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից հետո, Ապահովադիրը պարտավոր է ամրագրել իրադարձության հետ կապված բոլոր վնասները՝ լուսանկարման, տեսաձայնագրման կամ այլ միջոցով, որը թույլ կտա ամրագրել վնասը մինչև ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերի փոփոխվելը և տրամադրել դրանք Ապահովագրողին,

ժը) Հայտի կամ հնարավոր հայտի դեպքում, Ապահովադիրը, որը հատուցման պահանջ է ներկայացնում, չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է հանդես գա որևէ առաջարկով, խոստումով կամ կատարի որևէ վճարում կամ իրավական ծախսեր առանց Ապահովագրողի հետ համաձայնեցնելու:

10.3 Այն դեպքում, երբ Ապահովագրողին հայտնի չի դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք հնարավորություն կտային համապատասխան որոշում ընդունել ապահովագրական հատուցման հարցի վերջնական կարգավորման վերաբերյալ, և միաժամանակ Ապահովադրի կողմից Կանոնների 10.2 կետի ա)-ից ժթ) ենթակետերում, 10.2.1 և 11.2.2 կետերում նշված պարտավորությունները սահմանված կարգով կամ ժամկետներում չեն կատարվել, ապա Ապահովագրողը միանշանակ հրաժարվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

10.4 Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.2 կետի ժ) ենթակետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է Շահառու (Շահառուներ) և լիազորված վարորդ (վարորդներ), ապա սույն կետով սահմանված պարտավորությունները կրում է նաև Շահառուն (Շահառուները) և լիազորված վարորդը (վարորդները), որոնց Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել նման պարտավորությունների պարտադիր կատարման անհրաժեշտության մասին:

10.5 Եթե գողացված ապահովագրված գույքը հայտնաբերվել կամ վերադարձվել են Ապահովադրին կամ հայտնի է դարձել նախկինում որպես գողացված հայտարարված ապահովագրված գույքի գտնվելու վայրը, անմիջապես տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին, իսկ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումը: Ապահովագրողը կարող է երկարաձգել 30 (երեսուն) օրյա ժամկետը:

10.6 Ապահովադրի կողմից Կանոնների 10.2 կետի ժթ) ենթակետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում:

10.7 **Ապահովագրողն իրավունք ունի՝**

ա) Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

բ) վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

գ) ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

դ) Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ,

ե) միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը Ապահովադրի կողմից՝ օրենսդրությամբ կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

զ) պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

10.8 **Ապահովագրողը պարտավոր է՝**

ա) Ապահովադրին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

բ) Ապահովադրի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Ապահովագրության պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

դ) չհրապարակել Ապահովադրի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

10.9 Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

## ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

11.1 Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում:

11.2 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

11.3 Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

## ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի,

երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

12.2 Այն դեպքում, երբ 12.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

12.3 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

## ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1 Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

13.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

13.3 Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ ՛՛Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին՛՛ ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում:

Հավելված № 1

Շինարարական և մասնագիտացված տեխնիկայի կամավոր ապահովագրության Կանոնների

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ»)

Կանոնների Հավելված 1-ում շարադրված ապահովագրության պայմանները կիրառվում են Պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ, եթե Պայմանագրում առկա է դրանց կիրառման ցուցում կամ դրանք ներառված են Պայմանագրի տեքստում:

Վերապահումներ.Վերապահում 001 - Գործադուլներ, անկարգություններ և քաղաքացիական հուզումներ,

Վերապահում 006 - Արտաժամյա և գիշերային աշխատանք, աշխատանք պետական տոներին, էքսպրես-առաքում,

Վերապահում 007 - Օդային փոխադրումներ,

Վերապահում 013 - Շինհրապարակից դուրս պահպանում,

Վերապահում 014 – Աիաբեկչություն,

Վերապահում 108 - Շինարարական տեխնիկայի, սարքավորումների և մեքենաների նկատմամբ երաշխիք,

Վերապահում 400 - Մեքենաներ և սարքավորումներ ստորգետնյա աշխատանքների համար,

Վերապահում 401 - Փոխադրում երկրի ներսում,

Վերապահում 420 - Նավթի, գազի և երկրաջերմային հորատման սարքեր և սարքավորումներ,

Վերապահում 421 - Ջրի հորատման սարքավորումներ,

Վերապահում 499 - Սարքավորումներ, որոնք տեղադրված են բեռնանավերի և պոնտոնների վրա,

Վերապահում 015 - Սարքավորումների փրկում:

**Վերապահում 001 Գործադուլներ, անկարգություններ և քաղաքացիական հուզումներ**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում Պայմանագրով ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասվելու դեպքում, որը հետևանք է ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների:

Ապահովագրական պատահար է հանդիսանում ապահովագրված գույքի (բոլոր դեպքերում, հետևյալ (այսուհետ՝ Հատուկ) պայմանների պահպանման դեպքում) ոչնչացումը կամ վնասումը, որոնք տեղի են ունեցել.

1) ցանկացած անձի գործողությունների հետևանքով, ով այլ անձանց հետ համատեղ մասնակցում է հասարակական կարգի ցանկացած խախտման (գործադուլի կամ լոկաուտի հետ կապված, կամ դրանց հետ կապ չունեցող), բացառությամբ սույն Վերապահման Հատուկ պայմանների 2-րդ կետում նշված դեպքերի,

2) օրինական ճանապարհով ձևավորված ցանկացած իշխանության մարմնի գործողությունների հետևանքով՝ ցանկացած նման խախտում կանխելու կամ կանխման փորձ կատարելու ժամանակ, կամ ցանկացած նման խախտման հետևանքները նվազագույնի հասցնելու ժամանակ,

3) ցանկացած գործադուլ անողի կամ լոկաուտի ենթարկված աշխատողի դիտավորյալ գործողությունների հետևանքով՝ գործադուլը շարունակելու կամ լոկաուտին դիմադրության կարգով,

4) օրինական ճանապարհով ձևավորված ցանկացած իշխանության մարմնի գործողությունների հետևանքով՝ ցանկացած նման գործողություն կանխելու կամ կանխելու փորձի, կամ ցանկացած նման գործողության հետևանքները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Հատուկ պայմաններ

1. Սույն Վերապահման շրջանակներում ապահովագրական պատահար չի հանդիսանում և չի փոխհատուցվում.

a) Վնասը, որն առաջացել է ցանկացած օրինական ճանապարհով ստեղծված իշխանության մարմնի կողմից ապահովագրված գույքի մշտական կամ ժամանակավոր առգրավման, բռնագրավման կամ բռնազանձման արդյունքում,

b) Ցանկացած տեսակի կամ բնույթի անուղղակի վնասը կամ պատասխանատվությունը, սույն Վերապահումով նախատեսված նյութական վնասի համար ավելին կատարված ցանկացած վճարում:

Այնուամենայնիվ, Ապահովագրողը չի ազատվում ապահովագրական հատուցումից վերը նշված «a» ենթակետի դրույթներին համապատասխան ապահովագրված գույքի վնասման դեպքում, որը հասցվել է մինչև ապահովագրված գույքի առգրավումը կամ ժամանակավոր առգրավման ժամանակահատվածում:

2. Սույն Վերապահման շրջանակներում ապահովագրական պատահար չի հանդիսանում և հատուցման ենթակա չէ վնասը, որն անմիջականորեն կամ անուղղակիորեն առաջացել է կամ հետևանք է՝

a) պատերազմի, ներխուժման, հակառակորդի գործողությունների, ռազմական գործողությունների, կամ զորավարժությունների (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է թե ոչ), քաղաքացիական պատերազմի,

b) ապստամբության, քաղաքացիական (ժողովրդական) հուզումների, որոնք ձեռք են բերում ժողովրդական ապստամբության, զինված ապստամբության, խռովարար գործողությունների, խռովության, հեղափոխության, ռազմական ռեժիմի հաստատման կամ իշխանության յուրացման թափ,

c) ցանկացած կազմակերպության անունից կամ դրա հետ կապված գործող ցանկացած անձի ցանկացած գործողություն, որի գործունեությունն ուղղված է օրինական կառավարության ուժով դե յուրե կամ դե ֆակտո տապալելուն, կամ ահաբեկչության կամ բռնության միջոցով նրա վրա ճնշում գործադրելուն:

Ապահովագրված գույքին վնաս պատճառելու և սույն Վերապահման Հատուկ պայմանների 2-րդ կետում նշված բացառության միջև պատճառահետևանքային կապի բացակայության ապացուցման պարտականությունը կրում է Ապահովադիրը:

3. Սույն Վերապահման գործողությունը Ապահովագրողի պահանջով կարող է դադարեցվել մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտը՝ ծանուցելով Ապահովադրին համաձայն Պայմանների 7.11 կետով սահմանված եղանակներից որևէ մեկի միջոցով: Այդ դեպքում վերադարձման ենթակա է սույն Վերապահման շրջանակներում տրամադրվող ապահովագրության համար փաստացի վճարված լրացուցիչ ապահովագրավճարը՝ գործողության չլրացած ժամկետին համամասնորեն:

Սույն Վերապահման շրջանակներում միևնույն պատճառով առաջացած վնասների շարքը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար և սահմանափակվում է 168 ժամ անընդմեջ ժամանակահատվածով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

Սույն Վերապահումով ապահովագրական հատուցումների վճարների ընդհանուր գումարը (հատուցման ագրեգատային սահմանաչափը) սահմանափակվում է մեկ ապահովագրական պատահարի հատուցման սահմանաչափի կրկնակի չափով:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ՝ մեկ ապահովագրական պատահարի համար:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել ոչ պայմանական ֆրանշիզա՝ մեկ ապահովագրական պատահարի համար:

**Վերապահում 006 Արտաժամյա և գիշերային աշխատանք, աշխատանք պետական տոներին, էքսպրես առաքում**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողը ապահովագրական պատահարի (ապահովագրված գույքի վնասման) առաջացման դեպքում ապահովագրական հատուցման մեջ ներառում է արտաժամյա և գիշերային աշխատանքների, պետական տոների և էքսպրեսս (արագացված) փոխադրումների (բացառելով օդային փոխադրումները) ծախսերը, որոնք պայմանավորված են տվյալ ապահովագրական պատահարով:
Սույն Վերապահման շրջանակներում ծախսերը հատուցվում են ապահովագրական գումարի՝ ապահովագրված գույքի ապահովագրական արժեքի նկատմամբ համամասնորեն:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարի համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ մեկ և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

**Վերապահում 007 Օդային փոխադրումներ**

Սույն Վերապահման համաձայն ՝ Ապահովագրողը ապահովագրական պատահարի (ապահովագրված գույքի վնասման) առաջացման դեպքում ապահովագրական հատուցման մեջ ներառում է օդային փոխադրումների ծախսերը, որոնք պայմանավորված են տվյալ ապահովագրական պատահարով:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ մեկ ապահովագրական պատահարի համար՝ ապահովագրության ողջ ժամկետի համար (հատուցման ագրեգատային սահմանաչափ):
Ոչ պայմանական ֆրանշիզան կազմում է հատուցվող ծախսերի գումարի 20% (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

**Վերապահում 013 շինհրապարակից դուրս պահվող գույք**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասվածքի դեպքում (բացառությամբ արտադրողի, դիստրիբյուտորի կամ մատակարարի տարածքում արտադրության, մշակման կամ պահպանման ընթացքում գտնվող գույքի), որը պահվում է սույն Վերապահման համար Պայմանագրում նշված շինհրապարակից դուրս գտնվող ապահովագրության տարածքում:

Ապահովագրողը չի իրականացնում ապահովագրական հատուցում վնասի պատճառման այն դեպքերում, որոնք առաջացել են պահեստների կամ պահեստարանների համար ընդհանուր առմամբ ընդունված վնասների կանխարգելմանն ուղղված միջոցառումների չպահպանման հետևանքով: Մասնավորապես, նման միջոցառումները ներառում են՝

- պահեստավորման փակ հրապարակի ստեղծում (տարածքի ներսում կամ պատնեշի ներսում), պահպանության ապահովում, համապատասխան հակահրդեհային միջոցների կիրառում՝ կախված պահեստավորվող գույքի որոշակի տեղակայումից կամ տեսակից,
- պահեստային կառույցների բաժանելը հակահրդեհային պատերով կամ դրանք միմյանցից առնվազն 50 մետր հեռավորության վրա դասելը (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ),
- պահեստավորման միավորների տեղադրումն ու նախագծումն այնպես, որպեսզի կանխվի ջրի կուտակումը կամ հեղեղումը անձրևի կամ ջրհեղեղի ժամանակ, որն ունի 20 տարին մեկ կամ ավելի անգամ կրկնության վիճակագրական հավանականություն (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով),
- մեկ պահեստային շինությունում պահպանության տակ գտնվող գույքի արժեքի սահմանափակում:

Պայմանագրով կարող է սահմանվել մեկ պահեստային շինությունում պահվող գույքի առավելագույն արժեք:

Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ՝ մեկ ապահովագրական պատահարի համար:

Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել ոչ պայմանական ֆրանշիզա՝ մեկ ապահովագրական պատահարի համար:

**Վերապահում 014 Ահաբեկչություն**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողը կատարում է ապահովագրական հատուցում երրորդ անձանց գործողությունների հետևանքով ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասի դեպքում, որոնք համաձայն ՀՀ գործող օրենսդրության, որակվում են որպես ահաբեկչության, դիվերսիա (Ահաբեկչություն ռիսկ):

Սույն Պայմանների համաձայն «Ահաբեկչություն» և «Դիվերսիա» ռիսկերը ունեն հետևյալ նշանակությունները.

Ահաբեկչություն՝ այնպիսի գործողություն, որն ուղղված է քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի մահվանը կամ ծանր մարմնական վնասվածք պատճառելուն կամ դրանց սպառնալիքին, այն դեպքում, երբ այդպիսի գործողության նպատակն իր բնույթով բնակչությանն ահաբեկելը կամ պետական մարմնի կամ միջազգային կազմակերպության կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման կամ գործողության կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու վրա ներգործելն է:

Դիվերսիա՝ պետությունը թուլացնելու նպատակով պայթյուններ, հրկիզումներ կամ այլ գործողություններ կատարելը՝ ուղղված մարդկանց զանգվածային ոչնչացմանը, նրանց առողջությանը վնաս պատճառելուն, կազմակերպությունների, կառույցների, հաղորդակցության ճանապարհների կամ

միջոցների, կապի միջոցների կամ գույքի ավերմանը կամ վնասմանը, կամ զանգվածային թունավորումներին կամ համաճարակների կամ անասնահամաճարակների տարածմանը:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ` մեկ ապահովագրական պատահարի համար:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել ոչ պայմանական ֆրանշիզա՝ մեկ ապահովագրական պատահարի համար:

**Վերապահում 108 Երաշխիք շինարարական տեխնիկայի, սարքավորումների և մեքենաների նկատմամբ**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրված շինարարական և մասնագիտացված տեխնիկայի, սարքավորումների և մեքենաների կորստի, ոչնչացման կամ վնասվածքի դեպքում, որն առաջացել է անմիջականորեն կամ անուղղակիորեն ջրհեղեղից կամ հեղեղումից, միայն այն դեպքում, երբ աշխատանքների ավարտից կամ աշխատանքների իրականացման ցանկացած ընդմիջման ժամանակ ապահովագրված շինարարական և մասնագիտացված տեխնիկան, սարքավորումներն ու մեքենաները տեղավորված են այն վայրում, որն անհասանելի է ջրհեղեղներին կամ հեղեղումներին, որոնք ՀՀ հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի ծառայության հաստատված տվյալներով ունեն 20 տարին մեկ կամ ավելի անգամ (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

**Դրույթ 400 Մեքենաներ և սարքավորումներ ստորգետնյա աշխատանքների համար**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում ապահովագրության ներկայացվող շինարարական և մասնագիտացված տեխնիկայի, սարքավորումների ցանկի մեջ նշված ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորի ոչնչացման կամ վնասվածքի դեպքում, որոնք առաջացել են ջրհեղեղից, հեղեղումից, սողանքից կամ փլուզումից, հողի նստեցումից, թունելների փլուզումից և այլն, յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարի (հատուցման սահմանաչափի) սահմաններում:.
Սակայն, ապահովագրական հատուցման ենթակա չէ ապահովագրված գույքին պատճառված վնասը, այն դեպքում, եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվում է ապահովագրական պատահարի առաջացման վայրից ապահովագրված գույքը հողի տակից դուրս բերելուն ուղղված միջոցառումների իրականացումից:
Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ` մեկ ապահովագրական պատահարի համար:Սույն Վերապահման գործողության տակ ընկնող ապահովագրական պատահարների համար Պայմանագրով կարող է սահմանվել ոչ պայմանական ֆրանշիզա՝ մեկ ապահովագրական պատահարի համար:

**Վերապահում 401 - Փոխադրում երկրի ներսում**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում ծովային, գետային, օդային կամ երկաթուղային փոխադրումներից տարբերվող միջոցներով, ապահովագրված գույքի շինարարական հարթակ կամ հարթակից դուրս ժամանակավոր պահպանության փոխադրման ժամանակ (ներառյալ բեռնումը և բեռնաթափումը), սույն Վերապահման մեջ նշված փոխադրման տարածքի սահմաններում ապահովագրված գույքի կորստի, ոչնչացման կամ վնասվածքի դեպքում, պայմանով, որ՝

(a) նշված գույքը գտնվում է Ապահովադրի (Շահառուի) սեփականության, պահպանման, տիրապետության տակ,

(b) ներքին փոխադրումների ապահովագրությունը Ապահովադրին (Շահառուին) չի փոխհատուցվում ապահովագրության այլ պայմանագրերով,

(c) տվյալ փոխադրումն իրականացվում է այն երկրի սահմաններում, որտեղ գտնվում է շինհրապարակը:

Ընդ որում, Ապահովադիրը (Շահառուն) պետք է առաջնորդվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված փոխադրումների իրականացման և ձևակերպման կանոններով:

1. Սույն Վերապահման համաձայն, փոխհատուցվում է փոխադրման ընթացքում Ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասվածքի հետևանքով առաջացած վնասը (ռիսկ «Փոխադրում երկրի ներսում»), որը հետևանք է՝

a) հրդեհի, պայթյունի,

b) ճանապարհատրանսպորտային պատահարի,

c) փոխադրման միջոցի խոչընդոտի հետ բախման,

d) փոխադրման միջոցի կողաշրջվելու, ընկնելու, սայթաքման,

e) տարերային աղետների,

f) ապահովագրված գույքի փոխադրման միջոցի վրա բեռնման, բեռնաթափման,

g) ապահովագրված գույքի փոխադրման միջոցից կողաշրջվելու, ընկնելու,

h) գողության, կողոպուտի, ավազակության:

2. Սույն Վերապահման շրջանակներում փոխադրում ասելով հասկացվում է ապահովագրված գույքի ցամաքային տրանսպորտային միջոց հանդիսացող փոխադրման միջոցով տեղափոխումը՝ հատուկ տրանսպորտային հարթակում կամ տրանսպորտային միջոցի թափքում, ինչպես նաև այդ ընթացքում ուղարկման կետում և նշանակման վայրում բեռնման-բեռնաթափման աշխատանքների անցկացումը, պայմանով, որ վերը նշված աշխատանքներն իրականացվում են անվտանգության բոլոր նորմերի և նման աշխատանքների կատարման նորմերի պահպանմամբ:

3. Լրացուցիչ ապահովագրության տարածքը նշվում է Պայմանագրում:

**Վերապահում 420 Նավթի, գազի և երկրաջերմային հորատման սարքեր և սարքավորումներ**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում հետևյալ ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասվածքի դեպքում.

1. Ցանկում թվարկված ապահովագրության հայտարարագրվող հորատման սարքերի, գազային հորերի սպասարկման սարքավորումների, ինչպես նաև թվարկվածի հորատման աշտարակների, կաթսայատան սարքավորումների, հորատման խողովակների, գործիքների և տարբեր լրացուցիչ պարագաների պահեստամասերը, որոնք օգտագործվում են համատեղ դրանց հետ, կամ

օգտագործվում են Ապահովադրի (Շահառուի) կողմից առանձին, կամ որի համար Ապահովադիրը (Շահառուն) կարող է պատասխանատվություն կրել:

1.1. Միայն Պայմանագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում՝ ցանկումթվարկված ապահովագրության հայտարարգրված շարժակազմը, ցեմենտը, հորատման բաղադրությունները, քիմիկատները, պատյանային խողովակները, ավտոմոբիլային ճանապարհները, հետիոտնային արահետները, գրունտային խորացումները, ցանկացած պահեստներում կամ պահեստարաններում պահպանության տակ գտնվող ապահովագրված գույքը, եթե Պայմանագրում այլ բան նախատեսված չէ:

2. Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվող, նավերի կամ հորատման բեռնանավերի վրա չգտնվող կամ չտեղադրված, Նկարագրության մեջ թվարկված սարքավորումները: Ընդ որում, սույն Պայմաններով համաձայնեցված է, որ ապահովագրված սարքավորումների մի տարածքից մյուս տարածք տեղափոխման դեպքում, այդ սարքավորումների ապահովագրությունը տվյալ Պայմանագրով շարունակում է գործել միայն 10 օրվա ընթացքում նախնական ծանուցման և ապահովագրավճարի չափի վերանայման դեպքում,

3. Որը հետևանք է՝

- խառնարանի շատրվանացման կամ ձևավորման,
- հորատման աշտարակի կամ կայմի տարրերի բարձրացման կամ իջեցման,
- հորատման աշտարակի կամ կայմի ոչնչացման կամ անկման,
- աշխատանքի մեկ վայրից այլ վայր տեղափոխելու:

4. Հորատման գործիքը, սարքավորումները, մեքենաները կամ դրանց մասերը ստորգետնյա աշխատանքների ժամանակ, բայց միայն այն դեպքում, եթե դա պայմանավորված է շատրվանումով, խառնարանի ձևավորմամբ, հրդեհով, պայթյունով:

«Շատրվանացում» տերմինը սահմանվում է որպես հորատման լուծույթի (ցեխի, ջրի) հանկարծակի արտանետում, որին հաջորդում է նավթի, գազի կամ ջրի անկառավարելի հոսքը հորատանցքից, երբ մակերևույթի տակ որոշակի խորության վրա հորատանցքի մեջ մտնող նավթի, գազի կամ ջրի ճնշումը գերազանցում է հորատանցքում հորատման լուծույթի սյունով գործադրվող ճնշմանը, որի արդյունքում հորատանցքը դառնում է լիովին անկառավարելի:

«Խառնարան» տերմինը սահմանվում է որպես հողի վրա փոս (անցք), որը նման է հորատանցքի շուրջը գտնվող հողում ամբարի, որն առաջացել է առանց սահմանափակման հոսող գազի, նավթի կամ ջրի լվացող և ճեղքող գործողության արդյունքում:

Նշված ապահովագրությունը չի տարածվում հրդեհի դեմ պայքարի համար կիրառվող փրփրիչ լուծույթի և այլ նյութերի կիրառումից առաջացած ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասվածքի վրա, ինչպես նաև հրդեհաշիջման, շատրվանացման դեմ պայքարի կամ խառնարանների գոյացման միջոցառումների արդյունքում պատճառված վնասի վրա:

5. Կանոններով համաձայնեցված է, որ

- պատյանային խողովակները պետք է մակերևույթում հագեցած լինեն ստանդարտ կատարումով հականետման սարքերով, որոնք պետք է տեղադրվեն և պարբերաբար ստուգվեն՝ նավթի արդյունահանման պրակտիկային համապատասխան, գրանցելով այն գրանցամատյանում (սույն երաշխիքը չի տարածվում մալուխային հորատման հաստոցների վրա):
- չի թույլատրվում որպես հորատման լուծույթ օգտագործել նավթ, օդ կամ աերոզոլային տիղմ, սակայն չի բացառվում նավթային (փոխակերպված) տիղմի կամ նավթի օգտագործման հնարավորությունը՝

արդյունավետ շերտերը բացելու, կամ նավթի լվացման կամ այլ որոնողական նպատակներով օգտագործելու համար,

- պտտվող հորատման տեխնիկայի հետ աշխատելիս կամ հորատանցքի կապիտալ վերանորոգման ժամանակ անհրաժեշտ է պահպանել զգուշություն և մշտապես հետևել հորատման աշխատանքների և հորատանցքերի քանդման վերաբերյալ բոլոր կանոններին և դրույթներին, որոնք սահմանված են ցանկացած պետական, իրավասու, լիազորված, տեղական կամ այլ կարգավորող մարմինների կողմից, որոնք ունեն համապատասխան լիազորություններ,
- ապահովագրված օբյեկտների շահագործումը թույլատրվում է միայն Ապահովադրի և նրա աշխատակիցների կողմից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Վերապահումով:

Սույն ապահովագրությունը չպետք է խախտվի սպասարկող կազմակերպության և (կամ) վարձատուի (լիզինգատուի) դեմ սուբրոգացիայից հրաժարվելու միջոցով՝ Ապահովադրի (Շահառուի). հետ սպասարկման և (կամ) վարձակալության (լիզինգի) պայմանագրերում նրանց պատասխանատվության բացառման ճանապարհով:

Ապահովագրության լրացուցիչ տարածք - հորատման և Վերապահում 420-ի համաձյան ապահովագրված սարքավորումների աշխատանքների վայրերը և մեկ վայրից մյուսը տեղափոխվելու տարածքը:

**Վերապահում 421 Ջրի հորատման սարքավորումներ**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում հետևյալ ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասվածքի դեպքում.

- հորատման սարքերի և սարքավորումների, պայմանով, որ տվյալ սարքավորումը չի օգտագործվում նավթի, գազի և երկրաջերմային հորերի հորատման կամ գոյություն ունեցող նավթային, գազային և երկրաջերմային հորերում աշխատելու համար:

Բացի դրանից, Կանոնների 4.4.15. կետը փոխարինվում է հետևյալ ձևակերպմամբ՝

«Չի փոխհատուցվում հորատման ռոտորից ներքև գտնվող և (կամ) հողի մակարդակից ցածր հորատման խողովակների, հորատանցքերի եզրերի, հորատիչի գլխիկների, հորատանցքի խցիկի լայնացուցիչի, կայունացնող օղակների, սյունակային խողովակների, կարոտաժային սարքավորումների, պատյանային խողովակների և ցանկացած տեսակի գործիքների ոչնչացումը կամ վնասումը: Սակայն, ապահովագրական հատուցումը նախատեսված է վերը նշված բոլոր օբյեկտների համար, եթե դրանց ոչնչացումը կամ վնասը պայմանավորված է երկրաշարժով, հրաբխով, ցունամիով, փոթորիկներով, ջրհեղեղով, հեղեղումով, հրդեհով, պայթյունով կամ արտեզյան ջրերով»:

**Վերապահում 499 Սարքավորումներ, որոնք տեղադրված են բեռնանավերի և պոնտոնների վրա**

Սույն Վերապահման համաձայն՝ Ապահովագրողն իրականացնում է հետևյալ ապահովագրական հատուցում ապահովագրված գույքի ոչնչացման կամ վնասվածքի դեպքում, որը անվանական թվարկված է սարքավորումների և տեխնիկայի Նկարագրությունում՝

- տեղադրված է և աշխատում է հարթակների վրա ջրային մակերեսների եզրերի մոտ, բեռնանավերի և պոնտոնների վրա :

Սակայն Ապահովագրողը Ապահովադրին (Շահառուին) չի փոխհատուցում՝

1. Բեռնանավերի և պոնտոնների վրա տեղադրված ապահովագրված գույքի ցանկացած վտանգներից ոչնչացումը կամ վնասվածքը, որոնք տեղի են ունեցել ծանծաղուտի վրա վայրէջք կատարելիս կամ աշխատանքային հարթակում ջրհեղեղի ընթացքում:
2. Վերականգնման գործողության հետևանք հանդիսացող բեկորների փրկման, հեռացման և մաքրման ծախսերը, եթե Պայմանագրում չի կիրառվել «Սարքավորումների փրկում» 015 Վերապահումը:

**Վերապահում 015 «Սարքավորումների փրկում»**

1. Սույն Վերապահման համաձայն՝ Կողմերը համաձայնեցրել են, որ հողի տակ կամ ջրային մակերեսների եզրերի մոտ աշխատող, կամ բեռնանավերի և պոնտոնների վրա տեղադրված սարքավորումների կամ տեխնիկայի համար Ապահովագրողը փոխհատուցում է փրկության և դրանց հետագա մաքրման գործողությունների ծախսերը՝ Պայմանագրում նշված սահմանաչափերի սահմաններում, պայմանով որ՝
1.2. նման ծախսերն առաջացել են նմանատիպ սարքավորումների և տեխնիկայի համար ապահովագրական պատահարի հետ կապված,
1.3. Պայմանագրի մյուս բոլոր դրույթները և Պայմանագրում և Վերապահումներում կիրառված բացառությունները կիրառվում են այնքանով, որքանով դրանք չեն փոփոխվում և չեն փոխարինվում սույն Վերապահման պայմաններով :
2. Սույն Վերապահումով ապահովագրության ժամանակահատվածը նույնականացվում է Պայմանագրով ընդհանուր առմամբ սահմանված ժամանակահատվածին:
3. Ապահովագրության ամբողջ ժամանակահատվածի համար տվյալ ծախսերի հատուցման սահմանաչափը (ագրեգատային հատուցման սահմանաչափ) նշվում է Պայմանագրում: